



ՀԱՅՅԵՐԸ ԲԻՒՋԱՆԴԻԱՅՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՄԵԿԻԿ ԿԱՄ ԿԻՌ ԺԱՆ

ԲԻՒՋԱՆԴԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՅՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ *)

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՐԵԳ ԻՇԽԱՆ ՍՎԵՏՈՍԼԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ
ԱՐԿԱԴԻՈՊՈԼՍԻ ՄՕՏ



Եթև չէր այն բեռն, որ Չմշկեկը կամովի
յանձն առաւ. Նիկեփորը նրան ժառան-
գութիւն էր թողնում մի պետութիւն,
որի գոյութեան վտանգ էր սպառնում:
Արևելքում, ասորական սահմանի վրայ
չէին դադարել սարակինոսների դէմ պա-
տերազմները, որոնք դարերով էին շա-
րունակում. Կրէտէի և Կիլիկիայի յաղ-
թական հերոսը, Նիկեփորը, նոր նուա-
ճած երկրների սահմանները թողել էր
գրեթէ անպաշտպան, իտալական գործերը չփութեան մէջ,
բայց, որ գլխաւորն է, տէրութեան հիւսիսային սահմանի

*) Տես «Լուսնայ» չորրորդ տարի գիրք Բ. եր. 54—101.

վրայ, մայրաքաղաքից մի քանի օրուան ճանապարհ միայն հեռու ոտք էր հաստատել մի սոսկալի թշնամի, որին անխոհմտութեամբ Նիկեփորն էր հրաւիրել բոլղարների դէմ: Վարեգների Սվետոսլավ իշխանը Բոլղարիան նուաճելուց յետոյ միտք չ'ունէր իւր հայրենիք վերադառնալու, այլ հրապուրուած Կ. Պօլսի հարստութիւնների համբաւով, կամենում էր ուղղակի նրա վրայ արշաւել: Նիկեփորի սպանութեան լուրը վառեց Բիւզանդիոյ բոլոր թշնամիների վրէժխնդրութեան տենչն ու նոր կայսրը թագ կապելու յաջորդ օրուանից արդէն պիտի պատերազմի պատրաստութիւն տեսնէր: Գալնան բացուելուն էր սպասում Սվետոսլավ, որ անցնի Բալկանեան լեռներն ու տիրէ Թրակիային և Մակեդոնիային:

Զմեռուան խստութիւնն ու լեռնաշղթան անցնելու մեծամեծ ռիսկարութիւնները միայն կանգ էին առնել տուել ռուսաց կրակոտ իշխանին: Նիկեփորն զգալով իւր սխալը՝ սկսել էր պատրաստութիւն տեսնել նոր թշնամուն դէմ դնելու, Կ. Պօլսն ամրացրել էր և զինուորական նախապատրաստութիւնների մէջ էր, որ դեկտեմբերի 10-ին սպանուեցաւ, բայց նրա ձեռքից վայր ընկած սուրն արժանաւոր աջ բռնեց, Զմչկիկն արժանաւոր ժառանգ երևեցաւ Նիկեփորին:

Սվետոսլավի յարձակումներն սկսուեցան 970 թ. մարտ ամսից, նրա հրոսակախմբերը ասպատակեցին դէպի Թրակիա: Առաջին ամբողջիւր, որին տիրեցին, էր Ֆիլիպպօպոլի, որ անհետն հեղեղի մէջ խեղդեցին: Ժամանակակից պատմագիրն աւանդում է, որ քաղաքի առումից յետոյ քսան հազար գերիք ցից և կախաղան հանուեցան: Այս դէպքից յետոյ սարսափը տիրեց ամենին, թշնամիք դրանն էին գրեթէ, որովհետև այդ շրջանում Բիւզանդիոյ սահմանն անցնում էր Ֆիլիպպօպոլի և Անդրենոպոլի միջալայրով: Մի անգամ ևս հռովմէական հողն ոտնատակ եղաւ հեթանոսներից, որոնց առաջ միայն մի հարթ տարածութիւն կար մինչեւ աստուածապահ քաղաքը: Սարսափը շատ մեծ էր մայրաքաղաքում, ժամանակակից եկեղեցական բանաստեղծներից Յովհան Ներկաչափը նկարագրում է այդ վտանգը Փոկասին նուիրուած մի ոտանաւորի մէջ: Ըստ երևութին մի վայրկեան անգամ կորցնել կարելի չէր. սակայն Զմչկիկը վերջնականապէս այս յուսահատական կռուի մէջ մտնելուց առաջ փորձեց դիւանագիտութեան ճանապարհ-

հով փտանդը հեռացնելու Անշուշտ նա այսպէս էր դործում Վասիլ ներքինու ազդեցութեան տակ, որ միշտ աւելի սառնասիրտ և խոհեմ էր, թերեւ կամենում էր նաև ժամանակ վաստակել իւր զօրագնդերը խմբելու համար: Վայսերական բաժնէրները, «Խասիլխաններ», ուղարկուեցան փութով Սվետոսլավի մօտ: Սրանք Յովհանի կողմից հետևեալ պատգամը տալուն. Վիմ Նախորդս, Փոկասը, քեզ հրաւիրել էր բոլղարներին նուաճելու համար: Եւ պատրաստ եմ քեզ վճարելու այդ ծառայութեան վարձը: Սրանից յետոյ ժամ է արդ, որ դու դառնաս քո հայրենիքը, Կիմերեան Բոսփորը, և թողնես Բոլղարիան, որ ինձ է պատկանում, որովհետև դա մի ժամանակ Մակեդոնիոյ մի մասն էր կազմում, որը հռովմէական կայսրութեան հին գաւառներէն է: Արդ՝ փութա յետ դառնալու այդ տեղից»։ Այս տիրական հրամանից յետոյ Սվետոսլավը, զրդուած միշտ դաւաճան Կալոսիից, որ մտադրուել էր կայսր դառնալու վարեգների օգնութեամբ այն պատասխանը տուաւ, որ Կարելի էր սպասել յաղթութիւններով դուռնուցած մի բարբարոս իշխանից: Ֆիլիպպոպոլսի առումից յետոյ բոլոր Թրակիան շտապել էր հպատակութիւն յայտնելու Կիևի իշխանին և Նեստորի անունը կրող քրդնիկոնի ու Յովհան Նրկրաչափի ոտանաւորին նայելով բարբարոս հրոսակներն ասպատակել էին մինչև Կ. Պօլսի պարսպների տակը: Հէնց այս ժամանակն էր, որ կայսեր դեսպանները պահանջում էին ռոսների (այսպէս էին կոչում դրանց այն ժամանակ) իշխանից հեռանալ Բոլղարիայից, որ արդէն այնքան սիրելի էր դարձել նրան իբրև աստուածային ամենայն բարիքներով լի մի երկիր: Ռոսների իշխանն ամենայն յանդգնութեամբ մերժեց կայսեր պատգամները, համաձայնեց թողնել միայն Թրակիան, որի համար ահագին փրկանք պահանջեց: Հիւսիսային Բոլղարիայում նուաճած քաղաքներն իսկ կամենում էր նա իւր ձեռքին պահել, մի խօսքով նա պարզապէս յայտնեց, որ ինքը մտադիր է հաստատուելու Դանուբեան Բոլղարիայում. «Եթէ դու մերժես իմ առաջարկներս, յայտնում էր բարբարոսների իշխանը Չմշկիկին, այն ժամանակ դու և քո հրպատակներդ ուրիշ ասելիք չ'ունիք, եթէ ոչ հեռանալու Նւրոպայից, ուր դուք այլևս գրեթէ հող չունիք, ուր և ապրելու ոչ մի իրաւունք չունիք: Յետ քաջուեցէք Ասիա, թողէք մեզ Կոստանդնուպօլիսը: Սա միակ միջոցն է ձեզ համար խաղաղութիւ-

նը հնարաւոր կացուցանելու ռուս ազգի հետ: Մի դարու ընթացքում այս երրորդ տնգամն էր, սկսած Ասկուլի արշաւանքից, որ ռուսները պահանջում էին Բիւզանդիոյ դարաւոր տէրերին իրենց թողնել Կոստանդնուպօլիսը: Ապագայումս իսկ մինչև մեր օրերը, կցում է Ֆրանսիացի պատմաբանը, Սվետոսլաւի ազգի սերունդները նորոգել են այս սպառնալիքները, բայց մոսկովեան ցեղը դեռ ևս տէր չէ այն հռչակաւոր վայրին, ուր ամբառնում էին հոռոմների կայսրների սրբազան պալատները:

Պատերազմն անխուսափելի էր դարձել: Չմշկիկի պէս մի եռանդոտ մարդու չէին կարող գոհացնել Սվետոսլաւի պատգամները. «սակայն, աւելացնում է Լևոն Սարկաւազը, նա կամեցաւ փորձել և մի վերջին խաղաղասիրական միջոց»: Չմշկիկը մի երկրորդ դեսպանութիւն ուղարկեց Սվետոսլաւի մօտ, թերեւ ժամանակ վատակելու նպատակով, որովհետև դրանք աւելի խիստ լեզուով սկսան խօսիլ. «Լսի՛ր իմ խորհրդներիս, ասում էր կայսրը վարեազների իշխանին, և լաւ կը լինի քեզ համար: Ճանապարհ ընկիր շուտով ինչքան կարող ես: Թող Աստուած չանէ, որ ես լինեմ այն խաղաղութեան վրդովողը, որ կայայսքան տարի մեր երկու ազգերի մէջ: Եթէ դու և քոյինք ազատակամ չը հեռանաք, միևնոյն է ուժով կը ստիպուիք հեռանալու: Նա կատարելապէս վստահ եմ, որ Աստուած ինձ պիտի տայ յաղթութիւնը: Յիշիր հօրդ Բգորի վախճանը»: Այս սպառնալից պատգամը լրացրեց իշխանի գայրոյթի չափը. «նա խելագարուեց», ասում է ժամանակագիրը. «Շատ անօգուտ է, ասաց նա Բիւզանդացի բանբերներին, որ ձեր տէրը նեղութիւն կրէ մեզ մօտ գալու: Թող նա այդ աշխատութիւնը յանձն չառնէ: Մեր վրանները քիչ ժամանակից Կոստանդնուպօլսի պարսպների տակ զարկած կը լինին: Մենք կը պատենք ձեր մայրաքաղաքը մի խոր խրամով, եթէ ձեր կայսրն և զինուորները փորձեն քաղաքից դուրս գալու, նրանց սոսկալի ընդունելութիւն կանենք: Մենք նրանց ցոյց կը տանք մեր քաջութիւնը գործերով, անպիտան վաճառականներ կամ մեր ձեռքի աշխատանքով ապրող խեղճ արհեստաւորներ չենք, այլ ազնիւ պատերազմողներ, արիւն թափելու ծարաւի, զէնքի ձեռքին ապրող և կռուող: Յովնան թագաւոր, ռուսները քո կարծածներդ չեն, նրանք կնամարդի չեն: Դու չես յաջողիլ երբէք քո ծիծաղելի սպառնա-

լիքներովդ նրանց զարհուրացնել, ինչպէս սարսափեցնում են ստնտուկի հէքիաթները ծծկեր մանուկներին», Սրա հետ միասին Սվեատոսլաւն յայտնեց իւր մաքի խորհուրդը: Բոլլարիան նրան չէր գրաւում, նա կամենում էր լինել Կոստանդնուպոլսին և նրա գանձերին: Յարեգրադի հարստութեան մասին առասպելները վաղուց էին գրգռել նոցա տենչերը, ուստի Չմչկիկը տեսաւ, որ անմիջապէս պէտք էր պատերազմն սկսել: Ասիայից եկած գնդերն անմիջապէս Եւրոպա անցան և սկսան դիմել դէպի Ֆիլիպպոսով: Կայսրը չը կարողացաւ զօրքի հետ անմիջապէս պատերազմի դատը դիմել, նա դեռ ևս չէր աւարտել իւր սպառազինութիւնը և երկիւղ էր կրում իւր նորահաստատ գահի դէմ դաւադրութիւններից:

Լևոն Սարկաւազի ասելով՝ Չմչկիկն այս ժամանակ կազմակերպեց այն ընտիր զօրագունդը, որոնց կոչեց «Անթանացոց» «Անմահներ», հաւանօրէն այսպէս կոչուած այն պատճառով, որ ամեն ճակատամարտից յետոյ սպանուածների տեղը լրացուում էին բանակի միջից ընտրուած արիագոյն զինուորներից: Ինչպէս Շլուսբերգէն ենթադրում է, սա մի նմանութիւն էր Պարսից «անմահից» կամ «մատեան» գնդի, որին նա իբրև հայ ծանօթ էր: Այս գնդի հրամանատարութիւնը Չմչկիկն իրեն վերապահեց և ինչպէս կը տեսնենք, մեծամեծ գործեր կատարեց այս նշանաւոր կուռի մէջ:

Վարեգների իշխանի դէմ հանուած առաջին գնդերն երկու զօրավար ունէին: Դրանցից մէկը Յովհան Չմչկիկի աներձագն էր, Վարդ Սկլերոսը, յայտնի պատերազմիկների սերնդից, որոնք «Սկլերոս» (խիստ, անգութ) մականունն էին կրում և նոյնպէս հայ էին ծագմամբ: Կիւ ժանն ամուսին էր Վարդի Մարիամ քրոջը, որ Լևոն Սարկաւազի ասելով, գեղեցիկ ու անարատ էր, բայց որ մեռել էր քիչ առաջ: Վարդ Սկլերոսը, որ տպագայում սասանեցրեց Բիւզանդիան, մի խստաբարոյ, յատկական խառնուածքով, անօրինակ եռանդով, զօրագլուխ էր, անուն էր հանել Նիկեփորի ժամանակ ասիական կռիւներում:

Բիւզանդական յառաջապահ գնդի զօրագլուխն էր նշանաւոր Ստրատոպետարքոս Պետրոս Փոկասը, Անտիօքի և Հալէպի նուաճողը, Եւրոպայում նա յետ էր մղել հունգարացոց յարձակումը Թրակիէից, չը նայելով որ սա ներքինի էր, բայց քաջութեամբ յետ չէր մնում իւր ժամանակակից հերոսներից:

Այս երկու զօրավարներին պատուիրեց կայսրը յարձակումն չը գործել, այլ Թրակէում հաստատուել և Թոյլ չը տալ, որ Կիւսի իշխանի հրոսակներն առաջ անցնեն: Սրանք պիտի սպասէին Սվետոսլաւի յարձակման, իրենց բանակը պիտի ամրացնէին և զօրքի շարունակ վարժելով կռուի համար պատրաստ պահէին: Վարդ Սկլերոսը բանակ դրաւ Անդրինոպոլսում և մանր գնդեր օւղարկելով՝ հսկում էր Թշնամու վրայ:

Անգործ չէր և Սվետոսլաւը, նա ամենայն պատրաստութիւն տեսել էր մի մեծ պատերազմի համար, բայց բիւզանդացի սաղարիչների շնորհիւ գլուխ էլ վերցրել բոլոր ազգային կուսակցութիւնը, դրանց դաւաճանութեան տեղեկանալով Սվետոսլաւը բռնել տուաւ բոլոր իշխաններին և կոտորեց, այսու իսպառ կոտորեց նա բոլորների դիմադրութիւնը: Նա դաշնակցութիւն էր հաստատել հունգարացւոց և պածենէզների հետ, որոնցով ստուարացրել էր իւր բանակը:

Վարեգների յառաջապահ գնդերն հասնում էին մինչև Անդրինոպոլ, սրանք կողոպտում և ամայացնում են իրենց անցած տեղերը: Մերձաւորապէս 970 թուի ապրիլ ամիսն էր: Բիւզանդացի ժամանակագիրներն իրենց յատուկ չափազանցութեամբ Սվետոսլաւի զօրքի թիւն հասցնում են 300,000—308.000 հոգու, Նեստոր կոչուած ժամանակագրութիւնը միայն 30,000 մարդ է հաշոււմ, Շլիմբերժէն 60,000 է ենթադրում: Կայսերական զօրքի յառաջխաղալն իմանալով՝ վարեգները փութացին նրանց դէմ ելնելու: Սվետոսլաւի բանակը բաղկացած էր ռուսներից, բոլղարներից, պածենէզներից, հունգարացիներից և հոններից: Սվետոսլաւը յառաջ էր մղում օգնական հեծելազօր գընդերն, որոնց մասին այնքան էլ հոգ չէր տանում, իսկ ինքը հետևում էր իւր փառաւոր հետևակախմբով: Նա կանգ առաւ այն ժամանակ, երբ իւր հեծելազօրն հանդիպեց բիւզանդական զօրաբանակի յառաջապահ գնդին: Այս վիպական կռուի առաջին ընդհարումները տեղի ունեցան Արկադիոպոլսի, այժմեան Բուրգազի դաշտում: Այդ քաղաքը 25 մղոն միայն հեռու էր Կոստանդնուպոլսից:

Բիւզանդական բանակի ընդհանուր հրամանատարը Վարդկլերոսն էր, որի ձեռքի տակի զօրքը միայն 12,000 հոգուց էր բաղկացած: Այս ընտիր զօրագնդերով նա առաջ ամրացել էր Անդրինոպոլսում, ապա սկսել էր յետ նահանջել, ձևացնելով՝

որ փախչում է, երկիւղ կրելով վարեգներէց: Այս ձևով նա աճեցրեց թշնամու համարձակութիւնը, որ առանց գիտենալու դէպի լարուած օրոգայթն էր դիմում: Վարեգները տեսնելով որ բիւզանդացիք չեն համարձակուում դիմադրելու, սկսել էին արհամարհել նրանց: Նրանք ցերեկով ողողում էին երկիրը, գիշերներն անց էին կացնում խրախճանութիւնների մէջ, ամեն զգուշութիւնից յոյների վերաբերութեամբ, ձեռք էին վեր առել: Այս բանին էր սպասում Վարդ Սկիւրոսը: Աջ թևով յենուելով Արկադիոպոլսի վրայ, նա սկսաւ փակել նրանց ճանապարհը դէպի առաջ, որոշեալ օրը մի հեծելազունդ հանեց նրանց դէմ, խրատ տալով փախուստ ձեացնել և նոցա դէպի դարանք քաշել: Յովհան Ալախասը, հեծելազնդի առաջնորդը սկզբաւ բռնէն յարձակումն գործեց, սպա սկսաւ կռուելով յետ նահանջել և վերջապէս արշաւելով փախչել, հալածող թշնամին առհամարհելով փախստական գունդն սկսաւ ձիարձակ հալածել յոյներին, այդ ժամանակ դարանից դուրս եկաւ Վարդ Սկիւրոսն իւր գնդով և ջարդեց թշնամեաց խառնուած և անկարգ ամբոխը: Ամբողջ զօրագունդը ոչնչացաւ, կենդանի մնացածներն ևս գերի բռնուեցան: Վարդ Սկիւրոսն իմանալով, որ թշնամեաց զլխաւոր բանակը յետևումն է և յարձակման է սպասում, օգուտ քաղեց այս յաջողութիւնից և առանց քաշուելու իւր զօրքի սակաւութիւնից, յարձակուեցաւ նրանց վրայ, որոնք հերոսական դիմադրութիւն ցոյց տուին: Վարդն իւր զօրքերէն խմբի բաժանեց, զլխաւոր գունդն ինքն առաջնորդեց թըշնամու դէմ, միւսներին պատուիրեց առաջին նշանին, յարձակումն գործել: Բիւզանդական ծանր հեծելազօրքի թափին չը կարողացին դէմ դնել հունգարացի և պածէնէզ թիթի հեծեալներն, ուստի փախան և խառնակութիւն յառաջ բերին հետևակ գնդի մէջ: Վարեգները հետևակ էին և պաշտպանուած իրենց մեծ վահաններով սոսկալի հարուածներ էին հասցնում տապաւնելով և նիղակներով: Մարտի խառն մէջ մի հսկայ վարեգ յարձակուեց Վարդ զօրավարի վրայ և մի սոսկալի սրի հարուած տուաւ նրա սաղաւարտին, իսկ սա էլ իւր կողմից սրով միջակտուր արաւ հսկայ հիւսիսականին: Հագիւ զիաթաւալ էր եղել առաջին հսկան, որ վրահասաւ երկրորդը, մի աւելի սոսկալին, այս անգամ Վարդին փրկեց իւր կրտսեր եղբայր կոստանդին Սկիւրոսը, որ նրա կողքին էր կուռում: Այս պատանու երեսին հագիւ էր աղուա-

մաղ բուսելի Տեսնելով իւր եղբօրն հասած վտանգը, Կոստանդինը սուրբ վրաբերաւ թշնամու գլխին, որը սակայն խոյս տուաւ հարուածից, իսկ Կոստանդինի սուրբ կտրեց ձիու գլուխն, ապա մի երկրորդ հարուածով միջակտուր արաւ գետնատարած հսկային:

Վարդ Փոկասը թէպէտ և քիչ մնաց Կեսարիայում, բայց այդքան ժամանակն էլ բաւական եղաւ մի մեծ բանակ ժողովելու համար: Նրան յարեցան այն բազմաթիւ բախտախնդիրները, որ այս անընդհատ պատերազմների շրջանում անգործ սպասում էին քաղաքներում, պատրաստ ամենայն ինչ կորցնելու կամ միանգամից փառքի ու հարստութեան հասնելու: Փոկասների ազգակիցներն ու կլիէնտները նոյնպէս մտան նրա դրօշ տակ: Պարսակուտէնոս եղբայրներն, որոնք հարուստ կալուածատէրներ էին, միացան նրա հետ իրենց զենքերով: Սրա կողմն անցաւ նաև Սիմէօն Ամպելան կոչուած մի հարուստ կալուածատէր, որ անուանի էր իւր առատաձեռնութեամբ և քաջութեամբ: Կրկին անգամ տեղի ունեցաւ այն փառաւոր հանդէսը, որ 963-ին կատարուել էր Կեսարիայ դաշտում, Վարդ Փոկասը կայսրը հռչակուեց իւր բանակի մէջ, սև կօշիկների փոխանակ ծիրանի կօշիկներ գգեցաւ, որ բարձրագոյն իշխանութեան նշաններից մէկն էր:

Ապստամբութիւնը սպառնում էր Եւֆրատի մեծ ծաւալ ստանալու, Վարդ Փոկասի հայրն ևս, որ Մենտիլիէն էր աքսորուած, իւր մի հին բարեկամի, Աբիւղոսի Ստեփաննոս եպիսկոպոսի շնորհիւ եւրոպական նահանգներումն էր կամեցել դրդումն յառաջ բերել, սակայն դաւադրութիւնը բացուել էր և յանդուգն եպիսկոպոսը գլխատուել, Լևոն Կիրապաղատի մահուան պատիժը Չմշկիկը փոխել էր կուրացման, այն ևս վերջին վայրկեանին մեղմել, պատուիրելով դահճին, առ երեսոյթս միայն գործ դնել այդ պատիժը:

Իլւզանդական խիստ բաղքերի ժամանակ մի այսպիսի մեղմութիւն անօրինակ է գրեթէ, սակայն մեղմութեան այս միակ օրինակը չէ, որ տուել է յոյներին այս հայ կայսրը:

Սրանից յետոյ աքսորեալների բոլոր ինչքը խլեցին և Եւֆրատի խիստ հսկողութեան տակ դրին, միանգամայն հալածել սկսան և նրանց բարեկամներին ու կուսակիցներին: Այս անյաջողութիւնը չը միտեցրեց Վարդ Փոկասին, նա կայսրութեան

հասած էր համարում իրեն, ուստի փութով շարժեց իւր բանակը Կեսարիայից դէպի մայրաքաղաքը, ճանապարհին ոտքի տակ սկսեալ տալ իր կողմը չանցնող գիւղերն ու քաղաքները, որոնց աւարը իւր գնդերին էր բաշխում: Չմշկիկը մի նամակ ուղղեց ապստամբին. «Քանի դեռ ժամանակ կայ, ով Վաւրդ, ճանաչէ չափդ» գրում էր Կիւ ժանը. «Հպատակուի՛ր մեր զօրութեան, մենք սիրով կը բաշխենք քեզ կեանքդ և կը թողնենք քեզ ու հետևորդներիդ ձեր ստացուածքը: Եթէ դու հակառակես մեր աղերսին, սոսկալի մահուամբ կը վախճանուես: Սակայն Վարդ Փոկասն հայհոյանք ժայթքեց կայսեր դէմ, նրան անառակ, անօրէն հրէշ, եղեռնագործ և հայրասպան կոչելով հրապարակաւ. «Երբձո՛ւր ինձ կայսրութիւնը, գրեց նա, որին ես աւելի եմ արժանի քան դու: Եթե՛նիցս պիտի վճարել տամ քեզ, ո՛վ թշուառական, իմ անբախտ հօրեղբորս, Նիկեփորի, մահը և այն չարչարանքները, որին ենթարկել ես հօրս և եղբորս...»:

Յովհանն տեսաւ, որ զուր էր յապաղելն, ուստի շտապեց իւր ամենից փորձուած զօրավարին, Վարդ Սկլերոսին ապստամբի դէմ ուղարկել, միանգամայն լիազօրութիւն տալով նրան արիւն չթափելու համար ամենայն միջոց գործ դնել, թեկնածուի կուսակիցներին գրաւելու համար պատիւ, փառք, դրամ և իշխանութիւն պարգևել իւր անուամբ: Վարդ Սկլերոսը ապստամբի վաղեմի զինակիցն ու ազգականն էր, իւր հարազատ եղբայրը, Կոստանդին Սկլերոսը նրա քրոջ ամուսինն էր: Վարդ Փոկասը մի ճարտարաբան նամակով մերժեց Սկլերոսի առաջարկն հպատակուելու մասին. «Մի՛ յոգնի՛ր այլ ևս, վերջացնում էր նա իւր նամակը, ինձ համոզելու, որ պարտաւորիմ ձեռքս ու ոտքս կոպուած իմ մահացու թշնամուս յանձնուել: Վիճակը ձգուած է: Ես կամ ձեռք կը ձգեմ կայսրութիւնն և դրանով միջոց կ'ունենամ իմ և իմայինների վրէժը լուծելու այս չարիքների անդունդից, ուր նա մեզ գլորել է, կամ թէ ոչ կը կրեմ արիաքար իմ ճակատագիրը»:

Վարդ Սկլերոսի դանդաղկոտութիւնը Փոկասն երկիւղի տեղ դնելով աւելի և աւելի յանդգնանում էր, կայսեր զօրավարը սակայն յառաջ էր տանում իւր ծրագիրն ու դիմում առաջ:

Կուրն երկար տևեց, վերջապէս, Սկլերոսը նշան տուաւ դարանամուտ զօրքին: Բիւզանդական բանակի երկու թևերը,

որ անտառում դարան էին մտել, զինուորական երգերով և թըմ-
բուկի ու փողերի աղմկով յարձակուեցան յոգնած վարեգների
վրայ, որոնք սկսան փախչել: Զուր էին աշխատում զօ-
րավարներն յետ պահել նրանց. սոսկումն էր տիրել ա-
մենին: Զօրագուկներից մէկը փորձեց պահել իւր զունդը, ա-
ռաջ անցաւ, կարծես թէ զօրականներն սկսան սիրտ առնել,
բայց վարդ Սկլերոսը վտանգը նախատեսելով յարձակուե-
ցաւ այդ հսկայի վրայ և սրի մի հարուածով կիսեց նրան երկու
մասի և ինչպէս աւանդում է տարեգրողը, հսկայի կէսն ընկաւ
ձիւս մի կողմը, միւսն էլ միւս կողմը: Սա վերջ տուաւ կռուին.
վարեգները զարհուրած փախստի դիմեցին: Մինչև մուծը կոխե-
լը շարունակուեց հալածանքը, անվերջ սպանութիւնները ծած-
կեցին դաշտը դիակներով. դժուար է սպանուածների թիւը ո-
րոշելը, բիւզանդացոյ չափազանցութիւններն այս մասին ակ-
նեւ եւն, մի բան միայն պարզ է, որ այս յաղթութիւնը փրկեց
կայսրութիւնն ու մայրաքաղաքը:

ԳԼ. Զ.

ՎԱՐԴ ՓՈԿԼՍԻ ԱՊՍՏԼՄԻՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԼՐՏՈՒԹԻՒՆԸ

Մինչ բիւզանդական զօրքերն այս սխրագործութիւններն
էին կատարում Թրակէի դաշտերում, Զմշկիկն անխոնջ շարու-
նակում էր իւր ահագին սպառազինութիւնը, Անատոլիայից ան-
դադար զնդեր էին գալիս մայրաքաղաք: Սրանց սպառազինում,
կրթում և շտապով փոխադրում էին դէպի Թրակիոյ և Մակեդո-
նիոյ թեմերի հարաւային սահմանները ձմերեւու համար: Սկե-
տոսլաւի արշաւագնդի մնացորդներն ու ամբողջ զօրքը կրկին
յետ քաշուեցաւ բալկանների միւս կողմն և կենդրոնացաւ Բու-
ղարիայում:

Նեստորի անուամբ յայտնի տարեգրութիւնը պատ-
մում է, որ Սկեատոսլաւը յաղթել է Անդրիանոպոլսի մօտ,
հասել է մինչև մայրաքաղաքի պարսպների տակ, ուր Զմշկիկը
նրան կանգ է առնել տուել սուտ խոստումներով և մի դաշ-
նադրութեամբ, որն ինքը նենգութեամբ խախտել է ապա: Շլիւմ-
բերժէն այս առթիւ յայտնում է, որ ինքն աւելի հաւատ է ըն-
ծայում յոյն ժամանակագիրներին, բայց մանաւանդ ժամանա-

կակից Լևոն Սարկաւազին, սակայն անհնարին չէ համարում, որ այդ միջոցին զինադադար ևս տեղի ունեցած լինի:

Յաջորդ տարին, 971 թուի դարնանը Չմշկիկն արդէն պատ-
րաստ էր իւր բանակին գլուխ անցնելու և դիմելու կայսրու-
թեան սպառնացող վարեճներին իշխանի դէմ, բայց մի անակըն-
կալ դիպուած խանգարեց նրան:

Սրբազան պալատում լուր ստացան, որ Վարդ Փոկասը, սպանուած Նիկեփոր կայսեր Լէօն եղբոր որդին, որին արգե-
լել էին Ամասիայում, ազատուել է արգելանքից և ապստամբու-
թեան դրօշն է բարձրացրել իւր երկու ազգական պատրիկներին
հետ միասին: Վարդ Փոկասը փախել էր բանտից մի փոթոր-
կակից գիշեր և գլուխ կանգնելով ապստամբ գնդին, իրեն գահի
թեկնածու էր հրատարակել, իբրև ժառանգ իւր հօրեղբորը:
Ապստամբները կարծում էին, որ Չմշկիկը զբաղուած լինելով
միջոց չի ունենալ իրենց դէմ գէնք առնելու, բայց սխալուե-
ցան, որովհետև կայսրն անմիջապէս Փոկասի դէմ ուղարկեց
յաղթական Վարդ Սկլերոսին իւր ձեռքի տակ եղած ամբողջ զո-
րութեամբ:

Ապստամբներն անվտանգ հասան Կեսարիա, որ Կենդրոն
էր Անատոլիոյ վարչութեան: Այս քաղաքը Փոկասի շնորհիւ շատ
էր բարձրացել և նրա անկմամբ ստորացել, այն տեղ էին Փո-
կասների ընտանեաց մերձաւորները, որոնք առիթ էին սպա-
սում գէնք առնելու: Ապստամբ թեկնածուն հասել էր Քառա-
սուն մարտիրոսների լճի կամ Ակ-Շէհէր-Գիօլի եզերքն ու բա-
նակ դրել: Այդ տեղ ընդհարուեցան երկու բանակները: Սկլե-
րոսն իւր ստացած հրահանգին համաձայն սկսաւ խոյս տալ
հակառակմարտից, նրա լրտեսները ծպտեալ իբրև մուրացկաններ
շրջում էին Փոկասի բանակում, խօսակցում էին զանազան զո-
րավարների հետ, յիշեցնում էին կայսեր ներողամտութիւնը,
խոստանում էին նոյն իսկ վարձատրութիւն, եթէ թողնէին ա-
պստամբին, միևնոյն ժամանակ սպառնում էին հաստատամիտե-
րին սոսկալի վրէժխնդրութեամբ: Դասալիքութիւնը սկսաւ. թեկ-
նածուի կուսակիցները մի առ մի թողին նրան, ամեն գիշեր
աչքի ընկնող կուսակիցներ անցնում էին կայսերական բանակը,
ուր նրանց գրկաբաց էին ընդունում: Նոյն իսկ Փոկասի ազ-
գականներն ու ապստամբութեան ղեկավարները, Սիմէօն Ամպե-
լաւը, Պարսակուտենոս եղբարք թողին նրան: Քիչ ժամանա-

կուժ ֆոկասի բանակը հալուեցաւ, նրա շուրջը մնացին մի-միայն իւր տան հաւատարիմները, նա սկսաւ քաջալերել իւրայիններին, խոստումներ անել, բայց իզուր, օր է ցօր նրա կողմնակիցների թիւը պակասում էր: Այդ ժամանակ միայն նա զգաց իւր անել վիճակը, նոյն իսկ տեսիլքների մէջ իւր գործի անյուսալի լինելն էր տեսնում. այս միտքն այնքան պաշարել էր նրան, որ ինչպէս տարեգրողը պատմում է, կայսերական ժիրանեզոյն կօշիկները սկսան սև երևել նրա աչքին: Այս յուսախաբուեցան մէջ նա մի փորձ ևս արաւ. կէս գիշերին մի քանի հաւատարիմներով թողեց իւր բանակն և փախաւ մի լեռնային ամրոց, ուր առաջուց պաշար էր պատրաստել և տեղափոխել էր իւր ընտանիքը: Այս ամրոցը Տօրոսի լեռնակրճեշումն էր և կոչւում էր Տիւրայիօն: Սկիւրոսը հալածեց նրան, բռնեց նրա հետևորդներից շատերին և կուրացրեց, Փոկասը սակայն կարողացաւ ինքն իրեն ամրոցը ձգել:

Սկիւրոսի գնդից մի քաջարի զինուոր բաժանուեցաւ իւր ընկերներից, դիմեց ուղղակի Փոկասի վրայ, հասաւ նրան ամրոցի դրան առաջ և սկսաւ հայհոյելով մարտի հրաւիրել. ապստամբն սկսաւ աղերսել Կոստանդին Քարոնին, այսպէս էր կոչւում այս քաջը Վանայի ինձ, ես արգէն բաւական թըշուառ եմ, խնայիր ինձ, աղաչում եմ: Յիշէր, յիշէր թէ ինչքան բախտը փոփոխական է: Տես. իմ հայրս կիւրապաղատ էր, իմ պապս կեսար, իմ հօրեղբայրս կայսր, ես ինքս առաջիններից մէկն էի: Տես թէ ես այժմ ուր եմ: Այսպէս աղերսում էր նա իւր խուլ թշնամուն, բայց յանկարծ կանգ առաւ, իբրև թէ անձնատուր է կամենում լինել: Քարոնը ծիծաղում էր նրա աղաչանքի վրայ, այդ խօսքերը տղայի խօսքեր անուանելով և սուրը քաշած կամենում էր հարուածել, որ յանկարծ Փոկասի սուրը կիսեց նրա գլուխը: Սրաշից յետոյ նա փակուեցաւ ամրոցում: Վարդ Սկիւրոսը պաշարեց բերդն ու ստիպեց առստամբին անձնատուր լինելու: Յաղթական զօրավարը կատարեց իւր գործն ու կայսեր յայտնեց Փոկասի բռնութիւնը: Չմչկիկը մի անգամ ևս ցոյց տուաւ իւր գթասրտութիւնը, փոխանակ ապստամբին գլխատելու կամ կուրացնելու, հրամայեց կտրել նրա մազերն և ուղարկել Քիոս կղզու մի վանք: Այսպիսի գթասրտութեան օրինակ առաջին անգամ Կիոս Ժան հայ կայսրը տուաւ բիւզանդացոց:

Այլ ևս չէր կարելի ժամանակ կորցնել։ Սկիւրոսը հրամանատարացաւ Նւրոսլա անցնելու իւր զօրաբանակով, Սվեատոսլաւի դէմ կռիւր շարունակելու։

Կիւ ժանի գահակալութեան երկրորդ տարուան (971) դարունն անցաւ Փոկլասի ապստամբութեան դէմ կռուելով և վարեգները արչաւանքի պատրաստութեան մէջ, նոյն տարուան ընթացքում նա մի դաշինք հաստատեց Վենետիկեցոց նորածին հասարակապետութեան հետ և Սառակիսոսների արչաւանքի դէմն առաւ։ Իտալական գործերը կարգի դնելու համար Գերմանիոյ կայսրութեան ժառանգին կնութեան տուաւ ծիրանեծին Թէոփանոն իշխանուհուն։ Վարեգները Արկադիոպոլսի պարտութիւնից յետոյ չը համարձակուեցան Կ. Պօլսի դէմ արչաւելու, թէպէտ և Վարդ Սկիւրոսի Ասիա անցնելը լաւ առիթ էր նրանց համար։

Այս տարին ևս անցաւ պատրաստութեան մէջ։ Վարդ Սկիւրոսին փոխարինող զօրավարը, Յովհան Կուրկուաս կամ Յովհան Գուրգէնն իւր ընթացքով աւելի ևս յանդգնութիւն ներշնչեց Սվեատոսլաւի վարեգներին։ Յովհան Գուրգէնը նշանաւոր հայ զօրավարների ցեղիցն էր, ինքն ևս հռչակ հանած զօրագլուխներից մէկը, բայց ծերութեան հասակում դանդաղկոտ և ծոյլ էր դարձել։ Այսպիսի ախոյեանի դիմաց վարեգ զնդերն համարձակութիւն առան և անդադար ասպատակում և աւերում էին Թրակիոյ և Մակեդոնիոյ բերդի դաշտերը։ Այս ասպատակութիւններն աւերել և ամայացրել էին երկիրը, շինական ժողովուրդը թողել էր դաշտերն ու գիւղերն և ապաստանել քաղաքների և բերդերի սլարիսպների յետևը, երկիրը մնացել էր անմշակ, իսկ վարեգները առատութեան մէջ լողում էին նուաճած երկրում։ Ամբողջ ձմեռն անցկացրին բիւզանդացիք պատրաստութեան մէջ, Կրէտէն նուաճող մեծ նաւատորմիդը կրկին սպառազինուեցաւ Սև ծովով պատերազմի դաշտը զօրք և պաշար հասցնելու ճանապարհը փակելու։

ԳԼ. Է.

ՉՄՇԿԻԿ ԿԱՅՍԵՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Զմշկիկը ձմեռուան ընթացքում մի նոր գործով ևս շտապեց իւր գահն ամրապնդելու։ Ինչպէս ասացինք, Զմշկիկն ա-

մուսնացած էր Վարդ Սկլերոսի քրոջ Մարիամի հետ, որ սակայն մեռել էր առանց ժառանգ թողնելու: Քաղաքական պատճառներն և ծերունի պատրիարքի դիմադրութիւնը արգելք էին եղել Զմէկիկին ամուսնանալու իւր սիրունու, Թէոփանոնի հետ, բայց նա պիտի հոգար օրինականութիւն տալու իւր գահակալութեան, ուստի և նոյն քաղաքական պատճառներից ստիպուեցաւ ամուսնանալու մի ծիրանեծին իշխանուհու հետ, որին սիրելու առանձին պատճառներ չունէր, սա միակ միջոցն էր իւր գահն յաւիշտակելուն ձեականութիւն տալու: Յովհանն ամուսնացաւ Կոստանդին էի դստեր, Ռոմանոս Ա-ի քրոջ հետ, որ երկու մատաղատի կայսրների շօրաքոյրն էր: Այս իշխանուհին կոչուում էր Թէոդորա և տասներկու տարի առաջ Թէոփանոնի խնդրի համաձայն աքսորուած էր իւր չորս քոյրերի հետ միասին իշխանաց կղզիների վանքերից մէկը: Բացի այս առթից մենք նրա անունը չենք լսում այլ ևս: Ժամանակակից պատմագրի նկարագիրը գովասանական չէ այս թագուհու մասին, նա ոչ գեղեցիկ էր և ոչ բարեկազմ: Գեղեցկութեան փոխանակ ունէր նա բարոյական ընտիր յատկութիւններ: Խնդիրն այն է, որ Թէոդորան կայսեր դուստր էր, և այս էր հայ արկածախնդրի ուզածն, որով կարող էր իւր անձը կապել մակեդոնական կայսերական տան հետ: Ամուսնանալով մատաղատի կայսրների բնիկ հօրաքրոջ հետ, նա դառնում էր բնական խնամակալ մանկահասակ կայսրների, Վասլի և Կոստանդինի: Սկիիտէս ժամանակագիրն յայտնում է, որ այս առթիւ ժողովուրդն համոզուեցաւ, որ՝ Յովհանն չէ կամենում զրկել գահից մանուկ կայսրներին: Լևոն Սարկաւազը նկարագրում է, ժողովրդի ցնծութիւնը այս հարսանեաց առթիւ: Ինչ վերաբերում է կայսեր ներքին զգացումներին դէպի իւր տգեղ ամուսինը, այդ մասին չեն խօսում պատմագիրները, սակայն բաւական է յիշել, որ Կիռ ժանի թերութիւններից գլխաւորը նոյն պատմագիրների ասելով՝ ցանկասիրութիւնն էր, որին անչուշտ նա յագուրդ կը տար Սրբազան Պալատի կանանոցը լցնելով ամեն ազգի հարճերով:

Հարսանիքը կատարուեցաւ 971 թուի նոյեմբերին մեծ չքով, սրան հետեւեց նոր թագուհու թագադրութիւնը, որի նկարագիրն ունինք մենք Արարողութեանց գրքում:

Այսպէս անցաւ 971-ից 972 թուի ձմեռը: Յովհան Զմէկի-

կի հայրական վարչութիւնը, որ ամէնի համար մեղմ էր և գթաւատ, այդ ժամանակ անչափ ժողովրդական դարձաւ: Այն պերճ, փառաւոր, բարեսիրտ, արդարասէր, առատ և հրապուրիչ իշխանըն ստիպուեցաւ իւր հանգստութեան օրերն անց կացնել հանդէսներ տալով: Ժողովրդին հաճելի հանդէսներն ու խաղերը միմեանց յաջորդում էին, որով Յովհանը սկսում էր օրինական կայսր դառնալ ժողովրդի աչքում: Այսպէս շարունակուեցաւ մինչև փետրուարի 19, երբ վերջանում էր բարիկենդանը:

ԳԼ. Ը.

ԿԱՅՍԵՐ ԱՐՀԱՒԱՆՔԸ ԵՒ ՊԵՐԵԱՍԼԱՎՑԻ ԱՌՈՒՄԸ

Գարնան բացուելուն պէս կայսրը դիմեց արշաւանքի: Մարտ ամսի 28-ին, ծաղկազարդի շաբաթի հինգերորդ օրը կայսրը դուրս եկաւ պալատից և ինքնակալութեան դրօշը ձեռին դիմեց խալկիսի Փրկչի մատուռը յաղթութիւն խնդրելու Աստուծոց: Ինքնակալութեան դրօշը մի երկար կոթով խաչվառ էր, որի մէջ տեղը կար Փրկչի խաչավայտի մի կտորը տուփի մէջ: Խալկիսի այս փոքրիկ կայսերական մատուռը Յովհանն ապա ընդարձակեց և ճոխացրեց զարդարանքներով:

Անհաւանական չէ կարծել, որ բիւզանդական բարձր վարքի հետ միասին մանր, հպատակ իշխանութեանց մէջ մուտք կը գործէին և բոլոր հանդիսակատարութիւններն, ուստի և արժէ այստեղ մանրամասնաբար կանգ առնել այն հանդիսի վրայ, որ տեղի ունեցաւ Չմչկիկի պատերազմի դուրս գալու օրը: Անշուշտ նոյն ձևերն էին բանեցնում և մեր Բազրատունի թագաւորները, բիւզանդական կայսրների «Հոգևոր որդիք»:

Վիռ ժանը դուրս եկաւ պալատական մատուռից և Կենարար խաչափայտն ամփոփող խաչվառը ձեռին, բոկոտն սկսաւ դիմել դէպի Սուրբ Սոփիա, նրան հետևում էր անհամար պաշտօնէութիւն ու հոգևորականութիւնը: Տաճարի մէջ կայսրը խնդրեց Աստուծոց տալ իրեն իբրև առաջնորդ մի հրեշտակ, որ գնար իւր բանակի առաջնից և հրավառ սրով ուղին ցոյց տար: Այս տեղից թափորը ուղղուեցաւ վաքիրնի տաճարը, ուր պահուում էր քաղաքի պաշտպան սուրբ Աստուածածնի հուշակաւոր պատկերը: Ճանապարհի ամբողջ երկարութեամբ ձգւում էր թա-

փորը, փողոցներում և կտուրների վրայ խռնուած էր ամբոխը, գնում էր թափօրի առաջևից սաղմոսելով: Ի՞նչ սրտաշարժ տեսարան պիտի ներկայացնէր այս եկեղեցական թափօրը, երբ երկիրը մեծագոյն վտանգի մէջ էր:

Վաքիւրնի տաճարից դուրս գալով կայսրը մտաւ նոյն առնումը կոչուող պալատը, որտեղից երևում էր Ոսկեղջիւրի առաջև շարուած նաւատորմիդը: Եկեղեցական թափօրն աւարտուեցաւ այս տեղ նաւատորմի օրհնութեամբ, որ կատարեց պատրիարքը, ապա տեղի ունեցաւ մի կեղծ նաւային ճակատամարտ, որից յետոյ մեծ դրօնգերիոսը կամ ծովապետը հրաման ստացաւ նաւելու Դանուբի դետարերանը, որպէս զի կտրէ վարեգների ծովով յետ դառնալու ճանապարհը: Դանուբ գետի անուն տալու ժամանակ Լևոն Սարկաւազը աւելացնում է. Դանուբը Խոտէր գետն է, դրախտի գետերից մէկը, «այն որ կոչւում է Փիսոլին»: Դուրս գալով Եդեսի արևելակողմից, նա շուտով մըտնում է գետնի տակ, այնտեղ մի առ ժամանակ հոսելուց յետոյ, արտաբլխում է կելտական լեռների մօտ, որ տեղից թաւալում է իւր ալիքն Նւրոպայի միջով դէպի Նւքսինեան Պոնտոսն, ուր թափւում է նա հինգ բերանով: Տասներորդ դարու վախճանին այս էր բիւզանդական ամենագիտնական մատենագրի գիտութիւնը, այս պէտք է աչքի առաջ ունենալ և մեր մատենագիրների քննութեան ժամանակ, որոնց համար Բիւզանդիան գիտութեանց աղբիւր էր:

Հասաւ վերջապէս այնքան խնամով պատրաստուած պատերազմի սկիզբը, որի մասին բիւզանդական պատմութեան նոր պատմահայր Լըբոն ասում է թէ «արժանի էր հնութեան ամենից հռչակաւոր զօրավարի գործ լինելու և մեզ այս կայսեր անձնական արիութեան և ռազմադիտութեան մասին մեծագոյն գաղափարն է տալիս»:

Մինչ Լևոն ծովակալի առաջնորդութեամբ նաւատորմիդը դէպի Դանուբի բերանն էր լողում, կայսրն իւր բանակի գլուխըն անցած դուրս եկաւ մայրաքաղաքից մարտ ամսի վերջին զատկի տօնից, որ այդ տարի ապրիլի 7-ին էր, քիչ առաջ: Կայսերական բանակը միացաւ Յովհան Գուրգէնի զնդին, որ ձմեռել էր Մակեդոնիայում: Յովհան Գուրգէնը մի արի զինուոր էր, բայց ծոյլ և արբեցող զօրագլուխ, նա անգործ նիրհում էր, մինչ վարեգները սիրտ առած նրա անգործութիւնից և Սկլերոսի զնդի

Ասիա տեղափոխուելուց, ասպատակում էին և աւերում Թրակիան և Մակեդոնիան, հասնում էին մինչև Անդրինոպոլսի պարպների տակը: Ահա այստեղ կանդ առաւ Չմշկիկի բանակը մի երկու օր: Անդրինոպոլսում կայսեր ներկայացան Սվետոսլավի երկու դեսպանները կամ աւելի ճիշդ ասելով՝ երկու լըրտես, որոնց երկիւղ ներշնչելու համար կայսրը հրամայեց չըջնել բանակի մէջ ցոյց տալ իւր բոլոր զօրութիւնն և ապա արձակել, որ երթան իրենց իշխանին պատմեն, թէ ինչ մեծ զօրութեան դէմ պէսքէ կռուի:

Այսպէս արագութեամբ յառաջ խաղաց, տեղեկանալով որ Բալկանեան լեռների անցքերն առանց պահապանի են, նա ժամանակ չը տուաւ վարեգներին իւր ուղին փակելու և արագութեամբ անցաւ այդ վտանգաւոր կրճերը: Այս դէպքը մեծ առաւելութիւն տուաւ բիւզանդացոյց, որովհետեւ եթէ Բալկանեան անցքերը պահապաններ ունենային, յոյները կարող չէին լեռների միւս կողմն անցնել, եթէ կարողանային ևս, մեծամեծ կորուստներ պիտի ունենային: Լեռնաշղթան անցնելուց առաջ պատերազմական խորհուրդ գումարուեց, ուր պատմադրի ասելով Չմշկիկը հետեւեալ ճառը խօսեց. «Կրճերը, որ տանում են դէպի Բուլղարիա, ազատ են: Վարեգները չեն փակել այդ անցքերը: Իրա պատճառը զատկական հանդէսներն են: Մեր ուսիսները չեն կարող երևակայել, որ մենք կը հրաժարուինք այդ հանդէսները տօնելու, որպէս զի շուտափոյթ իրենց վրայ յարձակուինք: Համոզուած, որ մենք գործել կը սկսենք տօներից յետոյ, դրանք թոյլ են տուել իրենց առաջը կտրել: Օգտուենք ուրեմն նրանց այս մեծագոյն սխալից նախքան ժամանակ կունենան այդ ուղղելու: Սա վստահ եմ, որ այս վտանգաւոր անցքը կատարելուց յետոյ, պատերազմի մեծագոյն դժուարութիւնները մի հարուածով կաւարտուին: Որովհետեւ մենք անմիջապէս կը յարձակուինք Պերեսալաւիցի վրայ, Բուլղարիոյ թագաւորունիստ քաղաքի, և վարեգներն յանկարծակիի բռնուելով, չեն կարողանալ մեզ դէմ դնել: Սրանից յետոյ մենք շուտով կը վերջացնենք գործը, այդ մոլի քաջերի հետ: Բալկանեան կրճերը մեծ սարսափի առարկայ էին բիւզանդացոյց համար, քանիցս այնտեղ բիւզանդական զնդերը կտոբրուել էին, քանիցս դերի բռնուել և կորել, ուստի լսելով կայսեր այս համարձակ ճառը, նրանք շփոթուեցան, բայց դիմախօսել չը յանդգնեցին:

Ձը խարուելով այս լուռմից, Չմշկիկը դիմեց նրանց մի կրակոտ քաջալերական ճառով, որ այս խօսքերով աւարտեց «Պատե-
րազմում ամենայն ինչ կախուած է վստահութիւնից: Եթէ մենք
դանդաղինք, միթէ վարեգները մեր մերձեանալն իմանալով՝ չեն
շտապիլ փակելու այդ կրճերը: Այն ժամանակ, յիրաւի, մենք
կրնինք վատթարագոյն վիճակի մէջ: Յիշեցէք որ դուք այն
հռովմէացոց սերունդն էք, որոնք Տիեզերքը նուաճեցին»:

Այս ճառով Յովհաննէր յաղթանակեց, Բանակը վառուեց
ամբողջապէս նախանձով, շարժուեցաւ. և առաջինց գնում էր
Անմահները, Չմշկիկի այս նոր ստեղծած Մատեան գունդը, մի
փառաւոր հեծելազունդ, որ այս կռուի մէջ փառքի շատ
պսակների արժանացաւ: Այս փայլուն ընտրեալ գունդը, կայսե-
րական այս նոր փաղանգը, կազմուած էր խնամով ազնուական
երիտասարդներից, որոնք ընտրուած էին Անատոլիոյ զօրաբա-
նակի արիագոյն զինուորներից: Դժբաղդաբար մինք չը գիտենք
ոչինչ նրանց սպառազինութեան մասին, միայն յայտնի է, որ
դա շատ գեղեցիկ ու հարուստ էր, որ այդ զինուորներն ա-
մենքն էլ զրահ ունէին հագած, որ հաւանօրէն ոսկէզօծած կը
լինէր: Մինչև իսկ անյայտ է մեզ դրանց թիւը, որ նայելով
դրանց կատարած գործերին պէտք է բաւական մեծ լինէր:

Այս յառաջապահ գնդին հետևում էր կայսրը, անշուշտ
չըջապատուած փայլուն սպայակոյտով: Պատմագրի ասելով՝ նա
գեղեցկապէս զարդարուած և սպառազինուած էր ոտից
մինչև գլուխ, նստած մի անիպարանոց ձիու վրայ և ձեռքին
բռնած երկար նիզակ: Այս շրջանի բոլոր պատերազմները նկա-
րագրելուս պատմագիրներն առանձնապէս յիշատակում են զօ-
րագլուխների սպառազինութիւնն ու փայլը, այս էր ժամանա-
կի սովորութիւնը, որով ազդում էին զինուորների ամբոխի
վրայ: Սրանց համար զօրագլխի արտաքոյ կարգի փայլը, գեր-
բնականին հասնող փառահեղութիւնը մի պայման էր յաջո-
ղութեան: Բոլոր այս սպառազինութեան միջոցներն էին պող-
պտը, ոսկին, արծաթը, ակնեղէնն ու կերպասը: Պատերազմի
ձիանն ևս ծածկուած էին լինում ոսկեթել բանուածներով:
Յովհաննէր Չմշկիկն իւր այս սպառազինութեան մէջ, հեռուից,
բալկանեան արևի ճառագայթների տակ նմանում էր աւանդա-
կան սուրբ Գէորգ զօրավարին:

Կայսեր բանակում կային տասնուհինգ հազար հետևակ և

տասն երեք հազար հեծելազոր, որոնց հետ հաշուելով և Մատեան գունդը, նա պէտք է երեսուն հազարի չափ զօրք ունենար, որի մէջ հեծելազնդի բազմութիւնը համեմատելով հետեւեկախմբի հետ, շատ աչքի է ընկնում, երևի այն պատճառով, որ վարեգների գէմ դրանք աւելի յաջողակ էին կռուում: Այս փառաւոր հեծելազնդի դիւաւոր մասը կազմում էին հայերը, որոնք առանձնապէս աչքի ընկան: Այս յառաջապահ գնդին հետեւում էր մի աւելի մեծ զօրագունդ, որ իւր հետ բերում էր պաշարն ու պաշարման գործիքները, այս գնդին առաջնորդում էր Վասիլ ներքինին, հռչակաւոր Պարակիմոմենոսը: Սրանից ևս երևում է, թէ ինչ վտանգ էր սպառնում կայսրութեան, որ ինքը կայսրն ու իւր ամենազօր առաջին նախարարը բոլոր կայսերական բանակով վարեգների գէմ էին արշաւել:

Չմշկիկն իւր այս ահագին բանակով անցաւ անվտանգ բաւկանների միւս կողմը, վարեգները յանկարծակիի բռնուեցան, նրանք չէին սպասում յոյներին, ուստի և ոչ մի դիմադրութեան չը հանդիպեց կայսրը, Վիւելի իշխանը ամենին հոգ չէր տարել կրճերի պահպանութեան համար: Լեռներից անցնելուց յետոյ կայսրը զօրքին հանգիստ տուաւ մի բնական ամուր դիրք ընտրելով իբրև բանակատեղ: Չարչարանաց չորեքաբլթի, ապրիլի 3-ին կայսրը դիմեց Մեծ Պերեսալաւիցի վրայ, որ բոլոր թագաւորների մայրաքաղաքն էր, ուր կենդրոնացրած էր թշնամեաց բանակի նշանաւոր մասը:

Այսօր իսկ կան այս նշանաւոր քաղաքի ողորմելի աւերակները, որ թուրքերը կոչում են Էսկի Ստամբուլ, ընկած Շոււմլայից հինգ ժամուան ճանապարհ հեռու գէպի հարաւ, բաւկանների ստորոտում: Ահագին պարիսպների մնացորդներն յայտնում են, որ այս գիւղը մի ժամանակ նշանաւոր քաղաք էր: Բազմաթիւ աւերակների մնացորդներն հաստատում են, որ սա էր բոլոր արքաների մայրաքաղաքը: Դեռ ևս կանգուն է մի քառակուսի պարսպապատ շէնք, որ տեղացիք սարայ են կոչում, անշուշտ Սիմէօն թագաւորի ժառանգների միջնաբերդը: Դեռ ևս քննուած չեն այս աւերակներն և հնախուզութեան համար մի անմշակ դաշտ է այս քաղաքը: Առաջին անգամ աւերուելով Նիկեփոր Լոգոթէտից, կրկին վերաշինուեցաւ Սիմէօն թագաւորի ձեռքով: Եայս քաղաքս քարաշէն և ամեն գոյնի փայտաշէն տներով, մարմարաշէն եկեղեցիներով, ոսկեզօծ ու

նկարագրող, ուր մարդարտագրող, մանեկագրող և ապարան-
ջանաւոր իշխանը նստած էր գահի վրայ, ոսկէ թուրը կողքից
կախած, շրջապատուած իւր փայլուն բոյարների խմբով: Զմշկիկի ձեռքով աւերուելուց յետոյ այլ ևս ոտքի չկանգնեց սա,
մինչև անցաւ տաճիկների ձեռքն և դարձաւ աւերակների կոյտ:
Յոյների յարձակման միջոցին քաղաքիս հրամանատարն
էր վարեգ իշխան Սֆինգել կամ Սիլենալդ բոյարը, որ Սվեա-
տոսլավից յետոյ երրորդն էր բանակի մէջ, իսկ Կիեւի իշխանն
այդ միջոցին Դորիւստոյունում կամ Սիլիստրայումն էր, անշուշտ
կայսերական նաւատորմի դէմ դնելու համար: Պատմութեան
ընթացքից երևում է, որ Սվենալդն ու իւր զօրագունդը բոլո-
րովին անտեղեակ էին յոյների յարձակման մասին, նրանք չէին
կարծում, որ կայսրն անցել է լեռների այս կողմը:

Բիւզանդական բանակը լուութեամբ առաջ էր դիմում:
Սակայն, երբ մերձեցաւ թշնամու բանակին, որ նոյն իսկ Պե-
րեասլաւցի պարիսպների տակն էր, տուած նշանի համաձայն
հնչեցին միանգամից բոլոր պատերազմական փողերը, թմբուկ-
ները, շեփորներն ու երաժշտական գործիքները: Օդը թնդաց
այս աղմուկից, մի սարսափելի աղաղակ բարձրացաւ, յոյն հե-
ծելագօրն ու հետևակագունդը պատերազմի գոռին գոչիւնով
յարձակուեցան թշնամեաց վրայ, որոնք աշխատում էին խմուել:
Առաջին սարսափից քիչ կազդուութեամբ՝ այս հիւսիսային հսկա-
ները գէնք առան, կարգի մտան և արձակեցին իրենց յատուկ
պատերազմական այն երկար մռնչիւնը, որով սովոր էին կռուի
ժամանակ միմեանց քաջալերել: Անմիջապէս մի կատաղի կռիւ
սկսաւ: Երկար ժամանակ ճակատամարտի վախճանն անորոշ
մնաց, որովհետև չնայելով բիւզանդացոց զօրքի քաջագործու-
թեան, վարեգները պաշտպանուում էին յուսահատ քաջութեամբ:
Զմշկիկն զգալով որ պէտք էր վերջ տալ այս ձգձգման, մար-
տի մէջ մղեց Անմահից գունդը, որ յետ էր պահել: Սրանք
մեծ թափով ընկան թշնամեաց ձախ թևի վրայ: Այս խիտ շարքե-
րով ընթացող հեծեալներն իրենց նիզակները դէպի առաջ բռն-
ած յարձակուեցան վարեգ հետևակագնդի վրայ, որ եռանկիւ-
նաձև էր շարուած: Չը նայելով իրենց սառնասիրտ արիւթեան,
վարեգներն ընկճուեցան, որովհետև անսովոր էին այսպիսի
կռուի: Սրանց պարտութիւնը պատճառ եղաւ ամբողջ բանակի
փախստեան, նրանք դիմեցին քաղաք, Անմահներն սկսան հա-

լածել ամեն կողմից, ջարդել իրենց երկար նիզակներով և շատերի ճանապարհը դէպի քաղաք կտրել: Դաշտը ծածկուեցաւ դիակներով, բազմաթիւ հիւսիսականներ գերի բռնուեցան, վերջապէս քաղաքի երկաթապատ դռները փակուեցան վերջին փախստականների յետևից: Սֆենգելը, որ պահեստի գնդով քաղաքումն էր մնացել, վախենալով, որ բիւզանդացիք քաղաք չը խուժեն, հրամայեց բոլոր դռներն ու ելքերը փակել: Պալատների յետնն ազատուելով Անմահների հալածանքից, ոգի առան նրանք ու միանալով քաղաքում մնացածների հետ դիմեցին պատնէշների պաշտպանութեան, որ ծածկեցին իրենց դիակներով, բայց կանգ առնել տուին բիւզանդացոց յարձակումը:

Ապրիլի 3-ի այս ճակատամարտը վարեգների համար շատ ճակատագրական եղաւ: Բիւզանդացի պատմագիրների չափազանցաբանութեամբ այդ օրը 8500 հոգի ընկան Սֆենգելի գնդից: Գիշերը միայն վախճան դրաւ այս սոսկալի կուռին: Բիւզանդացիք բանակ դրին քաղաքի պարիսպների տակ: Յոյն դաւաճան Կալոսիւրը, որ այս՝ վարեգների պատերազմի սկզբնական պատճառն էր, գտնուում էր Պերեսսուաւեցում, տեսնելով յոյն բանակի մէջ կայսեր, զգաց վրտանգի մեծութիւնն և հազիւ թէ մուլթը գետինն էր առել, որ դուրս սողաց քաղաքից և սանձարձակ արշաւանքով դիմեց Դորիւստուն, Սվետոսուաւին իմաց տալով:

Յաջորդ օրը, Աւագ հինգշաբթի, ապրիլի 4-ին, կայսեր օգնութեան հասաւ Վասիլ ներքինին իւր բանակով և պաշարման մեքենաներով: Քաղաքի պաշարումը կայսրն ինքն անձամբ կարգադրեց: Նախ քան յարձակում գործելը Յովհան Չմշկիկն իւր մեղմ բարձի համաձայն առաջարկեց Սֆենգելին անձնադուր լինել իւր գլխութեան, սպառնալով, որ հակառակ դէպքում, երբ իւր ձեռքն ընկնեն, ամենին կը կոտորէ: Զօրագլխի պատասխանը շատ չուշացաւ. նա մերժեց: Յովհանն առանց վայրկեան կորցնելու յարձակումն գործեց, որ Սվետոսուաւի հասնելուց առաջ տիրէ քաղաքին: Սրկար փողերի հնչիւնով բիւզանդական զնդերը սեպաձև փաղանգով խուժեցին պատնէշների վրայ: Յովհանն ինքն էր ղեկավարում յարձակման: Մեծ էր յարձակման թափը, բայց աւելի ևս մեծ եղաւ դիմադրութիւնը, վարեգները քաջալերուած Սֆենգելի ան-

դադոյ ձայնից, նետեր, քարեր և ամեն տեսակ սպանիչ նիւթեր էին տեղում բիւզանդացոց գլխին: Բիւզանդացոց պաշարման մեքենաներն անագին ժայռի կտորներ և բռնկող նիւթեր էին արձակում դէպի քաղաքը: Վարեգների դրուժիւնը անտանելի դարձաւ շնորհիւ այս մեքենաների, նրանք այլ ևս չէին կարողանում նոյն ուժով յետ մղել յարձակումները: Կայսրն իւր արժուի հայեացքով նկատեց այս, հրամայեց վեր մագլցելու սանդուղքներն յառաջ քաշել, ինքն անձամբ գնդերի մէջ պտտելով՝ գրգռում էր նրանց քաջութիւնը: Ահագին աղմկով դրուած սանդուղքներն անմիջապէս լցուում են վեր մագլցողներով, որոնք իրենց սիրելի կայսեր աչքի առաջ քաջութեան հրաշքներ գործել պատրաստ էին: Յանկարծ վեր է ցատկում պաշարողների միջից մի պատանի, գրեթէ անմօրուս մի տղայ, Թէոդոս Մեղոնիկոսէս, Անատոլեան գնդի մի զինուոր: Սա սուրը ձեռին, վահանը գլխին բռնած, թռչում է մի սանդուղքի վրայ, յետ է մղում իւր ընկերներին, բարձրանում է աստիճանից աստիճան սոսկալի տեղատարափի տակ և կանգնում է պատնէշի գլխին: Մի վարեգ փորձում է վայր գլորել նրան նիզակով, իսկ նա կտրում է այդ ոսոխի գլուխն ու պարսպից վայր գլորում: Ապա բարձրանում է նա պատնէշի գլուխը: Այս օրինակն ազդում է բիւզանդացոց վրայ, նրանք յաղթանակի աղաղակներով մագլցում են սանդուղքներով դէպի վեր, այդ մատաղ դիւցազնին հասնելու: Հետզհետէ նոր սանդուղքներ են շարուում, պատնէշները լցուում են բիւզանդական զօրքերով, վարեգները յետ են քաշուում և փողոցից փողոց հալածուելով՝ ապաստանում են պալատի պարսպի յետևը, ուր էր բոլորական թագաւորի գանձը:

Մինչ կարեգներն ապաստանում էին բոլորակալ թագաւորի պալատը կազմող միջնաբերդում, քաղաքն ընկաւ յոյների ձեռքը, որոնք դռները ջարդելով ներս խուժեցին և սկսան կողոպտել գերել ու այրել: Գերիների մէջ էր բոլորների թագաւորը, Բորիսը, Պետրոս ցարի աւագ որդին: Վարեգները նրան իւր հօր մահուանից յետոյ գրեթէ բանտարկուած էին պահում, սրան ճանաչեցին իւր խիւ ու չէկ մօրուսից: Նա զգեցած էր աքայական հանդերձներ և ծիրանի կօշիկներ: Սրան գերեցին իւր երիտասարդ թագուհու և երկու երեխայոց հետ միասին և տարան կայսեր առաջ, որ պատուաւոր ընդունելու-

Թիւն արաւ նրան: «Տէրդ բոլորաց, ասաց քաղաքագէտ հայը, ես լեռների այս կողմն եմ անցել, որ վրէժ առնեմ այն չարիքների համար, որ քեզ հասցրել են վարեգները: Ես չեմ եկել երբէք Բոլղարիան նուաճելու, այլ ազատելու: Իւր նրբամիտ քաղաքականութեամբ Յովհանն հրամայեց ազատ թողնել բոլոր բոլղար գերիներին, որ բռնել էին թշնամական գործերն սկսուելուց ի վեր: Վարեգ զօրքերի մէջ անշուշտ շատ բոլղարներ կային: Սակայն այս բոլորն անհրաժեշտ խօսքեր էին միայն հանգամանքից բղխած, աննշան գործեր Բոլղարիոյ ապագայի համար:

Կոտորածն ու կողոպուտը երկար տևեց քաղաքի մէջ: Նրբամիտներ, որոնք չէին կարողացել միջնաբերդը մտնել, կոտորուեցան և կամ գերի բռնուեցան, բիւզանդացիք պաշարեցին թշնամեաց վերջին ապստամբներն: Սկզբում սրանք մի քանի անգամ յանկարծակի յարձակումն գործեցին կողոպուտով դբադուած բիւզանդացոց վրայ և անզգոյշներին կոտորեցին: Նրանք կոտորեցին և այն յանդուգն զինուորներին, որոնք փորձեցին միջնաբերդը մտնել փախստականների հետ միասին: Յովհանն անձամբ հասաւ պաշարման վայրն ու սկսաւ ինքը ղեկավարել գործը: Բիւզանդացիք մի առ ժամանակ յուսահատուեցան և անառիկ համարելով այդ միջնաբերդը զենքերը վայր թողին: Թաա այդ միջոցին կայսրն ինքն առաջ անցաւ և այնպիսի վրտանդի մէջ միտուեցաւ, որ զօրքերը նրան ազատելու համար նորից կատաղի յարձակումն գործեցին, բայց էլի չը կարողացան առնել բերդը: Պէտք էր վերջ դնել կռուին, կայսրն հրամայեց կրակ տալ չրջապատի փայտէ պարիսպը, որից անցաւ տներնին, ուստի վարեգները ստիպուեցան դուրս խուժել: Հրդեհի մէջ շատերը կորան բարձարոսներից: Յոյները ներս խուժեցին և սկսան կոտորել մի գունդ վարեգներ վերջին դիմադրութիւնը ցոյց տուին և Վարդ Սկլերոսն իւր գնդով ստիպուեցաւ մինչև վերջին մարդը կոտորել նրանց: Այս կոտորածից ազատուեցաւ միայն Սֆենգելը, որ մի քանի մարդով փախաւ Սվետտոսլաւի մօտ:

Յաջորդ օրն Աւագ ուրբաթ էր. Չմշկիկն իւր զօրքին հանգիստ տուաւ. այդ և յաջորդ երկու օրն ևս, Չատկական տօնը կայսրը կատարեց բոլղարների մայրաքաղաքում, կիսաւեր մայր եկեղեցում: Բիւզանդական բանակի մէջ քահանայք և

վարդապետները մեծ բազմութիւն էին և հանդէսներն այնպիսի շքով էին կատարում, որ մեծ ազդեցութիւն էին թողնում պարտուածներէ վրայ:

Իւր ընթացքը շարունակելուց առաջ կայսրը հրամայեց քաղաքը պաշտպանողական վիճակի մէջ դնել, քանդուած պատնէշը նորոգել տուաւ և առնուած քաղաքի անունը փոխելով՝ վերակոչեց Յօհաննուպօլիս, իւր անուամբ: Քաղաքի մէջ պաշար ամբարկելով և բերդապահ գունդ թողնելով՝ նա դուրս եկաւ Սվեատոսլաւի դէմ գնալու:

Ապրիլի 8-ին կայսրը զօրքով դիմեց դէպի Դորիւստոլոն, բոլղարական երկրորդ մայրաքաղաքը, ուր Կիւսէի իշխանը կենդրոնացրել էր իւր զօրութիւնը: Ճանապարհին կայսրը մի քանի աննշան բերդերի ևս տիրեց, իսկ բոլղար քաղաքներէն շատերը տեսնելով վարեգների պարտութիւնը, մտան կայսեր հովանու տակ, որ ինչպէս տեսանք, ձևացնում էր, որ եկիւ էր Բոլղարիան ազատելու:

Դորիւստոլոնը հին հռովմէական Դիւրոստոքումն է և այսօրուան Սիլիստրան, որ Ժ. դարում մի շատ նշանաւոր ամբարկումն էր: Սվեատոսլաւը իւր զօրքին հասած գծախտութեան լուրն առնելով այստեղ, կատաղեց, նա ըմբռնել չէր կարողանում, թէ ինչպէս իրենից արհամարհուած բիւզանդացիք կարողացել էին իւր լաւագոյն քաջերին յաղթել ու ջարդել, սակայն այս գոռոզ վարեգը նահանջել առած բանը չը գիտէր: Չը նայելով իւր դառն վիճակին, նա մերժեց կայսեր առաջարկը: Յովհաննէ խնայելով իւրայինների արեան, առաջարկում էր վարեգ իշխանին թողնել Բոլղարիան և քաջուել իւր երկիրը: Իւր զօրքին քաջալերեց Սվեատոսլաւն ու վառեց վրէժխնդրութեան ոգով, բոլղարներին խրատելու համար, բոլոր բոլղարական զնդերը շղթայեց, իսկ նրանց նախարարներին կամ բռնադատելին, որոնք 300 հոգի էին, գլխատել տուաւ, որովհետեւ սրանք սկսել էին թողնել վարեգներին և անցնել յայնների կողմը:

Չմշկիլը մեծ զգուշութեամբ յառաջ էր դիմում գծուաբախը ճանապարհով դէպի Դորիւստոլոն, կայսերական բանակի լրտեսների խմբից երեք հարիւր հեծեալ անզգուշութեամբ շատ առաջ է անցնում և պատահում թշնամեաց մի մեծ խմբի, որ 7000 հոգուց էր բաղկացած: Բիւզանդական այս յանդուգն

գունդը, որ երեւի թէ վրացի կամ հայ օժանդակ խմբերիցն էին, իրենց բուռն յարձակմամբ փախցնում են մինչև Գորիսատուն:

ԳԼ. Թ.

ՍՎԵԱՏՈՍԼԱՒԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՂԵՐԱԿԱՆ
ՄԱՀԸ

Բիւզանդացոց և վարեդների վերջնական մենամարտը տեղի ունեցաւ Գորիսատունի կամ այժմեան Սիլիստրայի առաջ: Արժէ այդ հսկայական մենամարտի առաջ կանգ առնել և հանդիսատես լինել այն հերոսութիւններին, որ արին երկու կողմն ևս: Շլիւմբերժէն իւր Չմչկիկին նուիրած հատորի մէջ գեղեցկապէս նկարագրել է այդ մաքառումն և եթէ տեղի սղուծիւնը չ'արգելէր ինձ, սիրով յառաջ կը բերէի այդ ճարտարութեամբ նկարագրելը բառացի թարգմանութեամբ, սակայն ստիպուած եմ ծայրաքաղ անելով անցնել «Բիւզանդական վիպասանութեան» այս Գ. գլուխը (113—184):

Բիւզանդական բանակը Գորիսատունին մերձենալով հանդիպեց Սվետոսլաւի ճակատած զօրքին, որոնք թուով տասն երկու հազարի չափ էին, հետևակազօրը միջավայրում պաշտպանուած միացրած վահանների պարսպների յետևը, իսկ օժանդակ հեծեալ պաժէնեզների զնդերն երկու թևերի վրայ: Պաժէնեզներին հրամայուած էր հսկելու բոլորական զնդի վրայ և եթէ որ և է դաւաճանութեան փորձ տեսնէին նրանց կողմից, պէտք է կոտորէին ամենին: Յովհանն ևս իւր հետևակազօրը մէջ տեղում կարգեց, իսկ սպառազէն հեծեալներին «Անմահից» զնդի հետ միասին երկու թևերում: Հեծեալազօրքի յետևում շարուած էին սլաւաւորները, Բիւզանդացիք քաջալերուած էին նախընթաց յաղթութիւններով, ուստի տեղ հասնելու օրը (ապրիլի 23-ին) ճակատամարտ տուին:

Վաւիւն սկսան բիւզանդական հեծեալները, որոնք մեծ թափով յարձակումն գործեցին վարեզների սեպաձև շարուած բանակի վրայ. Չմչկիկն ինքն էր հրամանատարութիւն անում, ինչպէս թշնամու բանակում Սվետոսլաւը: Երկու զնդերի կատաղութիւնն ևս հաւասար էր. վարեզներն անյաղթելի անունը

ժառանգած լինելով՝ չէին կամենում տեղի տալ, իսկ բիւզանդացիք ձանձրացած սրանց յանդգնութիւնից յուսահատական ճիգեր էին անում յաղթելու նրանց, Վարեդները բանակի կողմն էր պատերազմական յանդգնութիւնը, բիւզանդականինը ուղղակի տուրքներ:

Տարուբերուող յաջողութեամբ կռուեցան երկու կողմերը մինչև մոլթը կոխելը, ժամանակագրերի ասելով՝ այդ օրը յաջողութիւնը տասներկու անգամ մի դնդից միւսն անցաւ: Տասներորդ դարու հայ պատմագիր Ասողիկը, որ ժամանակակից էր այս դէպքերին, պատմում է, որ Յովհաննի բանակում շատ հայ դնդեր կային, սրանք էին ահա, որ երբ յոյն հեծելազօրը յետ մղուեցաւ վարեգներից, հաստատուն մնացին և պաշտպանեցին կայսեր, մինչև փախստեան դիմող հեծելախմբերը կրկին ոգի առին և թշնամու վրայ յարձակուեցան: Այս դիւցազն զօրականները յարձակուեցան առիւծաբար թշնամու վրայ, որ կայսեր վրայ էին խուժել, սրի ճարակ արին նրանց մի մասն, իսկ միւսը փախցրին: Հայերն այս ժամանակ քաջ զօրականներ էին, և աչքի էին ընկել արդէն Ասողիքում Նիկեփօր Փոկասի ժամանակ: Այս մասին յատկապէս վկայում է Աբուլֆէրաշ արաբ տարեգրողը: Հակատամարտը չէր ընդհատուում սակայն, չնայելով մերձեցող դիչերուան, ոչ մի կողմը չէր նահանջում: Վերջապէս կայսրն անձամբ վճռեց վերջ դնել դրան, նիզակը դէպի առաջ ուղղած խթեց իւր նօթյգն ու ընկաւ թշնամեաց վրայ, պաճենէգների գունդը ձախ թնկի վրայ տեղի տուաւ այս բռնուն յարձակման և խառնուեցաւ, Սվետոսլաւն անձամբ օգնութեան հասաւ նրանց մի նոր զնդով, կայսրն ևս յառաջ կոչեց իւր պահեստի վերջին զնդերը: Մինչև կէս գիշեր շարունակուեցաւ այս կատաղի կռիւը, վերջապէս վարեգները դիմադրել չկարողացան և փախստի դիմեցին, որի ժամանակ յոյները մեծ բազմութիւն կոտորեցին և գերեցին: Հակատամարտը դադարեց միայն այն ժամանակ, երբ վերջին կենդանի մնացած թշնամին քաղաքի պատնէշների յետն անցաւ: Այս վախճանն ունեցաւ ահա 972 թուի ապրիլի 23-ի այս հռչակաւոր ճակատամարտը:

Հակատամարտը տեղի էր ունեցել մեծ նահատակ սուրբ Գէորգի տօնի օրը, ուստի և յոյներն ու իրենց բարեպաշտ կայսրը նրան վերագրեցին իրենց յաղթութիւնը: Պատերազմը

արիւնոտ դաշտը գրաւեցին յոյներն ու մեծ խրախճանով տօնեցին իրենց այս յաղթութիւնը:

Միւս օրն առաւօտուց իսկ ինքնակալը բանակը յառաջ մղեց բերդի պարսպներէ տակ, ուր փակուած էին Բոլղարիայում մնացած բոլոր վարեգները: Ձը նայելով ապրիլի 4-ի և 23-ի յաղթութիւններին՝ վարեգները դեռ ևս հզօր ախոյեաններ էին: Պէտք էր զգոյշ լինել նրանց յարձակմանց դէմ: Կայսրն անմիջապէս ամրացրեց իւր բանակն և սպասեց նաւատորմդին, որ դեռ ևս տեղ չէր հասել: Նաւերը պէտք է փակէին վարեգների յետո նահանջման ճանապարհը ծովով: Լևոն Սարկաւազը նկարագրել է հակիրճ խօսքերով յոյն բանակի ամրացումը: Նրա ասելով՝ դա սովորական ձևն էր բիւզանդացոյ, երբ թշնամու երկրում բանակում էին: Դորիւստոլոնի դիմացը մի բարձրաւանդակի վրայ Յովհանն հաստատեց իւր բանակը: Բանակետդի շուրջը մի խորը խրամ փորուեցաւ, դրանից հանուած հողը թումբ կազմեց, որի վրայ դրուեցան քար: ընկեց մեքենաներն և պատնէշ կազմեցին: Այս երկաթէ պարսպից ոչ ոք ներս թափանցել չէր կարող: Զօրքը ապահովապէս պատսպարուում էր այս պատնէշի յետևը և դիւրութեամբ յետ էր մղում ամեն մի յարձակումն: Բանակետդի տարածութիւնը պէտք է ահագին լինէր, որովհետև այնտեղ պատսպարուած էր զօրքից զատ և ամբողջ աղին և ծառայագունդը:

Բանակն այսպէս ամրացնելուց յետոյ Յովհանն վճռեց յարձակումը գործել չը սպասելով նաւատորմդի հասնելուն: Պատմագրի ասելով դա տեղի ունեցաւ մի օր յետոյ, ապրիլի 25-ին, հինգշաբթի: Օրերի թիւն ու յաջորդող գործողութիւնները ցոյց են տալիս, թէ տասներորդ դարում ինչպիսի մաթեմատիքական ճշգրտութեամբ էին վարուում ռազմական գործողութիւնները. ապրիլի 23-ին յոյները կռուում են մինչև գիշեր, տասներկու անգամ յետ են մղուում և էլի յաղթում, միւս օրը փոխանակ հանգստանալու, նրանք ամրացնում են իրենց բանակը և յաջորդ օրը, 25 ին ապրիլի յարձակում Դորիւստոլոնի վրայ:

Առաջին յարձակումն սկսաւ առաւօտեան վաղ և տևեց ամբողջ օրը, յոյները բաւականանում էին միայն քարեր արձակելով, վարեգներն ևս նրանց պատասխանում էին պատնէշների վրայից. այդ օրը բիւզանդացիք կարող չեղան մերձենալ

պարսպներին, գիշեր վրայ հասաւ թէ չէ, կայսրը յետ կանչեց զօրքը: Բայց հազիւ թէ դադրած բիւզանդացիք բանակն էին մտել և ընթերելու էին պատրաստուում, որ դէտերը նշան տուին, թէ վարեգներն երկու կողմից յարձակումն են գործում: Այս անգամ վարեգների մեծ մասը ձիաւորուած էին, յոյս ունենալով յոյների հետ այդպէս աւելի յաջողութեամբ մաքառելու: Քաղաքի արևելեան դռնից վարեգները դուրս խուժեցին և յարձակուեցան Պետրոս Փոկասի դնդի վրայ, որ արևմտեան զօրախմբի զօրավարն էր, իսկ արևմտեան դռնից խուժեցին Անատոլեան դնդի վրայ, որի զօրագլուխն էր արի Վարդ Սկլէրոսը: Բիւզանդացիք մեծ դժուարութեամբ յետ մղեցին այս յարձակումը կէս գիշերին: Հեծեալ վարեգները կարող չեղան մաքառել յոյների դէմ, որովհետև նրանք ոչ ձիու վրայ նստել գիտէին և ոչ էլ հեծեալ կռուել: Բիւզանդացիք իրենց երկար նիզակներով փախստեան մատնեցին այս անվարժ հեծեալներին: Շատերը կոտորուեցան այդ գիշերը: Դժուարին եղաւ վազեց հետեակներին յետ մղելը: Յոյն ժամանակագրի ասելով՝ յոյները ոչ մի մարդ չը կորցրին այդ պատերազմում, որ հաւանական չէ անշուշտ:

Հասաւ վերջապէս և բիւզանդական փառաւոր նաւատորմիդ ծովակալ Լևոնի հրամանատարութեամբ: Նաւերը փակեցին վարեգների նահանջի ուղին: Յոյն զօրքերն ուրախութեան ազադակով ողջունեցին նաւատորմի ժամանումը: Մեծ և զաւ վարեգների սարսափը հրընկեց նաւերի տեսքի առաջ, որովհետև ի մանկութենէ լսել էին նրանք այդ ծովային հրէշների մասին, որ վառել ու լափել էր Իգորի արշաւախումբը: Անմիջապէս նրանք ցամաք հանեցին իրենց մակոյկները, որոնցով եկել էին հեռաւոր հայրենիքից: Այդ մակոյկները մի մի ծառի բնից փորուած թեթև նաւակներ էին, որոնցով վարեգները լողում էին դետերի վրայ, իսկ սահանքներում ցամաք էին հանում և ձեռքով տանում մինչև նաւարկելի գետերը: Յոյներից ազատելու համար այս մակոյկները դիզեցին նրանք Դորիւստոլոնի պարսպների տակ, ուր գետն էր հոսում, այսպիսով նրանք կամենում էին ազատել իրենց փրկութեան այդ վերջին յոյսը:

Ամբողջ գիշերն յոյն բանակում լսուում էր վարեգ զօրքի լաց ու կոծը, նրանք կատարում էին սգոյ հանգէսը, տրիզ-

Նախ: Այս կոծին մասնակցում էին և կանայք, որոնց ձայնը իշխում էր տղամարդոց խռովող ձայնի վրայ: Դուռն խռն էին սզոյ խաղերը, որոնցով վարեգները սովոր էին փառաւորելու իրենց սպանած ընկերի փառքն ու նրանց մուտքը վալհալա:

Ապրիլի 26-ին Սվետոսլավը քաղաքի մէջ առաւ դուրսը, ամբողջութեամբ պաշտպանող, վարեգ զնդերն էա: Յովհանն ճակատը յարդարեց, վարեգներին դուրս հրաւիրեց մարտի, բայց նրանք փակուած մնացին և չեկան կռուելու: Նրեկոյեան միայն, երբ բիւզանդացիք յոգնած և քաղցած դիմում էին ընթերելու, ստիպուեցան յարձակուող վարեգների դէմ դուրս գալու: Այդ օրը կայսրն ընդունել էր Վոնստանգիւս և մի քանի այլ քաղաքների ներկայացուցիչներին, որոնք եկել էին իրենց քաղաքների բանալիքն յանձնելու: Կայսրն ընդունեց դրանց սիրով և բերդապահներ ուղարկեց գրաւելու այդ քաղաքները:

Մինչ յոյներն անկասկած էին, վարեգները դուրս խուժեցին բոլոր դռներէն և ընկան նրանց վրայ: Այդ գիշերուան մարտըն աւելի կատաղի և արիւնահեղ էր. մի վայրկեան յաղորութիւնը կարծես թէ անցել էր իսկ վարեգների կողմը, սակայն մի հանգամանք փոխեց ճակատամարտի ելքը: Սֆենգելը, Պերեսաւաւեցի հերոսն սպանուեցաւ մի հասարակ յոյն զինուորից: Սրա մահը պատճառ եղաւ վարեգների չփոթութեան և յետ նահանջելուն: Չը նայելով այս դժբաղդութեան, նրանք դեռ շարունակեցին կռիւն ու քաղաք չը մտան, կայսրը փորձեց նրանց շուրջը պտտել և ճանապարհը կտրել, վտանգը նըշմարելով՝ վարեգները կամեցան յետ նահանջել, բայց արդէն ուշ էր: Փախչող վարեգները ցրուեցին դաշտի վրայ և բիւզանդացիք մեծ կոտորած արին, սակաւները միայն կարողացան քաղաք մտնել հեռաւոր դռներով: Ասիացի զինուորներից մէկը, Թէոփոր Լալական, որ յայտնի էր իւր անսովոր յանդգնութեամբ, զարմացրեց ամբողջ բանակն իւր արած կոտորածներով, նա այնպիսի ուժգին հարուածներ էր տալիս, որ կտրում էր թրով սաղաւարտն ու գլուխը միանգամից:

Վերջապէս կայսրը յետ կանչեց իւր յոգնած զօրքը, մեծ քանակութեամբ պարէն բաշխել տուաւ նրանց և շրջելով զնդերի մէջ վառեց նրանց արիասրտութիւնը իւր ճառերով: Վարեգները միայն այժմ փակուեցան բոլորովին Դորիւստոլոնում և բիւզան-

դացիք յուսահատուած յարձակումներէց, սպասեցին պաշարմամբ առնելու քաղաքը:

Մի փոքրիկ յաջողութիւն ձեռք բերին վարեդները նոյն այդ գիշերը, ապրիլի 27-ից՝ 28-ը, օգուտ քաղելով մթութիւնից և փոթորկեց երկու հազար հոգի իրենց նաւակներով եղերք դուրս եկան, ինչ որ պաշարեղէն գտան բարձեցին նաւերն և կոտորելով յոյն բանակի ծառաներից շատերին, մտան քաղաքը: Յովհանն կատաղեց յոյն նաւատորմի դէմ և խիստ հրամաններ տուաւ ասպագայի համար: Այժմ Դորիւստոլոնը մտադիր էր նա քաղցածութեամբ ստիպելու որ իւր ձեռքը մատնուի:

Մինչ կիւ ժամն այս հերոսական կռիւն էր մղում Բիւզանդիոյ գոյութիւնն ապահովելու համար, քիչ մնաց զրկուէր դաշից. արեւելեան կայսրութեան մէջ այնքան սովորական դարձած դաւադրութիւններէց մէկը Կ. Պօլսում քիչ էր մնացել որ յաջողուէր: Այս անգամ ևս Փոկասներն էին դաւադրութիւն յարուցանողը: Յովհանն իւր մեղմութեամբ և մարդասիրութեամբ խնայել էր Լևոն Փոկասի և նրա որդու Նիկետաս Փոկասի կեանքըն ու փոխանակ գլխատել տալու կամ կուրացնելու, հրամայել էր կուրացումը ձեացնել և արգելել Լիզրոս կղզուս: Սըբանք կաշառելով իրենց պահապաններին, փախել էին Մեթեմնէից և նաւակով հասել Կ. Պօլիս, այդ տեղ դեռ շատ էին Փոկասների կուսակիցք, որոնց միջոցով յոյս ունէին Սըբազան պալատը մտնել և կայսր հրատարակել Լևոնին: Կամենալով իրենց կողմը գրաւել կայսերական մետաքսեղենի գործարանի գլխաւորին, որ նա ևս իւր բազմաթիւ գործաւորներով օժանդակէ գործին, դաւադիրներէց մին գնաց նրան յայտնելու դադտնիքը, սա առ երեսս համաձայնեց և ապա մատնեց նրան Վասիլ ներքինուն և Լևոն ծովակալին, որոնք այդ ժամանակ մայրաքաղաքումն էին: Վասիլ ներքինին գլուխ կորցնող մարդ չէր, ուստի անմիջապէս զօրքով շրջապատեց դաւադիրներին, Սուրբ Սօֆիայից, ուր ապաստանել էին Փոկասները, դուրս քարչեց նրանց և ուղարկեց իշխանաց կղզու վանքերէց մէկն, ուր ապա կուրացրին նրանց և մինչև իրենց կեանքի վերջը պահեցին: Այս անգամ միայն ընկճուեցան այս անհանգիստ դաւաճանները:

Նոյն այս ժամանակ, պատմում է Սկիլետէս ժամանակագիրը, արժանի յիշատակութեան մի իրողութիւն պատահե-

ցաւ: Մերակուտի անգամներէն մէկի պարտիզում դտան մի մարմարէ տախտակ մի տղամարդու և մի կնոջ պատկեր վրան փսրուած և հետեւեալ արձանագրութեամբ. «երկւոր կեանք Յովհաննիս և Թէոդորային, քրիստոսասէր թագաւորողաց»: Շատերն հետաքրքրուեցան այս մարգարէական քարով, ասում է պարզամիտ ժամանակագիրը: Նրանց թուում էր, որ դա իրերի դրութիւնն էր գուշակում, առաւել թերահաւատները կասկածում էին մի խորհրայութիւն և կեղծիք էին նկատում պարտիզի տիրոջ կողմից դէպի կայսրը: Նա ոչինչ չեմ հաստատում, աւարտում է խոհեմ մատենագիրն իւր խօսքը, որովհետեւ չը գիտեմ^{*)} թէ ո՞ր կողմն է ճշմարտութիւնը »:

Յովհաննի առանց մի վայրկեան անգամ հանգիստ տալու շարունակում էր Դորիւստողոնի պաշարումն, որ երկու ամիս ու կէս այլևս տևեց, թերևս վարեգներն օգնութեան էին սպասում, կամ յոյս էին դրել Կ. Պօլսի դաւադրութեան յաջողութեան, որ առանց յարձակման փորձ անելու նստած էին: Յովհանը մտադրուել էր քաղցով առնելու քաղաքը, ուստի օրէ ցօր խստացնում էր պաշարումը: միւս կողմից ևս մեքենաներով ջանում էր քանդել պարիսպները: Պաշարման մեքենայից հրամանատարն էր հռչակաւոր Յովհան Գուրգէն զօրավարն, որ արգէն ծեր էր և արեւցութեան մատնուած: Յուլիսի 19-ին, կէսօրուանից յետոյ վարեգները յարձակումն դործեցին մեքենայից վրայ: Գուրգէնը ճաշից և գինուց ծանրացած քնած էր, երբ իմաց տուին թշնամու յարձակումը, նա դեռ թմրած ձիու վրայ թռաւ և յառաջ անցաւ իւր գնդի հետ միասին, սակայն յանկարծ վայր գլորուեցաւ ձիուց և վարեգները կայսեր տեղ գնելով նրան թափուեցան վրան: Մի վայրկեանի մէջ թշնամիք գլխատեցին նրան և յետ քաշուելով ցցեցին նրա գլուխը պատնէշներից մէկի վրայ: Իւլզանդական բանակի համար այս մեծ կորուստ էր, որ սիրտ տուաւ թշնամեաց:

*) Այս մի բանաձև, որ շատ էին տիրում բիւզանդական ժամանակագիրներն և որ յաճախ գործ է դնում և մեր պատմահայր խորենացին, անշուշտ նրանց հետեւելով: Այս աւթիւ յիշեցնում եմ խորենացու հետազոտողներին այն բազմաթիւ նմանութեան կէտերը, որ կան մեր պատմահօր երկի և բիւզանդական ժամանակագրողների երկերում: Սրանցից են և տեղերի անունանց այն կամայական բացատրութիւնները, որ այնքան տիրում է խորենացին. տես Շիւմբերթէ, երես 73. Ծանօթ. 1:

Յաջորդ օրը, յուլիսի 20 ին, Սվետոսլավը միանգամ ևս փորձեց բախտը: Բոլոր գէնք կրելու ընդունակ զինուորները ժողովեց նա և իւր հրամանատարութեամբ դուրս խուժեց: Վարեգների բանակի մի թևին հրամայում էր Սվետոսլավից յետոյ երկրորդը, Խլմոր հերոսը, որ մեծ հռչակ ունէր վարեգների մէջ: Արդէն իսկ երկար ժամանակ տևում էր արիւնահեղ կռիւը, բիւզանդացիք հազիւ դէմ էին դնում այս բուռն յարձակման, Անմահից գունդը հալուումէր հետզհետէ, երբ սրբանցից մէկը, Կրէտէի արաբ խալիֆի որդին, Անիմասը սպանեց վարեգ հերոս Խլմորին և վախճան տուաւ ճակատամարտին: Վարեգները մեծ կորստով վախան և մտան քաղաքը, նոյն իսկ Սվետոսլավը պիտի գերի ընկնէր, բայց օգուտ քաղեց մթու թիւնից և փախչելով ազատուեցաւ:

Գիշերը մի սոսկալի տեսարան բացուեցաւ բիւզանդական բանակի առաջ: Վարեգներն սկսան իրենց սղոյ ողբն և երբ յուսինը բարձրացաւ երկնակամարի վրայ, դուրս սողացին այս հիւսիսային հսկաներն ու սկսան ժողովել իրենց ընկերների դիակները, դրին հսկայական խարոյկների վրայ և սկսան այրել: Քաղաքից հանեցին բազմաթիւ գերի յոյներ և բոլղարներ, գլխատեցին դրանց մեռած հերոսների հոգիք ամոքելու համար և ձգեցին խարոյկների վրայ: Այս գոհերի մէջ կային և կանայք ու մանկունք, այս վերջիններիս առաջ խեղդում էին նրբանք և ձգում դետը: Ստնտեայ մանուկների հետ միասին նրանք գետն էին ձգում և աքաղաղներ:

Յաջորդ օրն, երբ յոյներն սկսան կողոպտել դաշտում մնացած վարեգների դիակները, դրանց մէջ գտան շատ կանայք, որ կռուել և ընկել էին իրենց ամուսինների հետ միասին:

Այս անգամ ևս ընկճուելով վարեգներն սկսեցին յուսահատուել. արդէն իսկ սակաւաթիւ, պաշարմամբ վերջին նեղութեան հասած, օգնութեան և նահանջի յոյները կտրած՝ նրանք անձնատուր լինելու էին մտածում, երբ Սվետոսլավը նրանց խորհրդի հրաւիրեց, յուլիսի 21-ի առաւօտեան: Խորհրդի մէջ կարծիքները բաժանուեցան, ոմանք խորհուրդ էին տալիս գիշերով նաւերը մտնել և փախչել, այլք կամենում էին խաղաղութիւն անել յոյների հետ: Լուռութեամբ այս ամենը լսելուց յետոյ Սվետոսլավը գոչեց որոտաձայն, որ պէտք էր կռիւը շարունակել: «Աւելի լաւ է մեռնել փառաւոր մահուամբ, գոչեց

նա, քան թէ ապրել անարդուածն: Այս խօսքերն հրճուանաց աղաղակներով ընդունուեցան, նրանք վճռեցին մի փորձ ևս անել յաղթելու կամ մեռնելու:

Վերջին կռիւն սկսաւ: Վարեգների զնդերը վահաններով պատսպարուած և խիտ շարքերով դիմեց բիւզանդացոց վրայ: Սվետոսլաւը քաղաքի դռները փակել էր տուել փախչողներէ յոյսը կտրելու համար: Յովհանն իւր զօրքի ընտիր՝ զնդերն յառաջ մղեց, Նրկու կողմն ևս պատրաստ էին մեռնելու բայց մի քայլ դէպի յետ չ'անելու:

Մի վայրկեան ընկճուելու վրայ էին յոյները, որոնք ամարային տօթի տակ, ծարաւից պտպակուած և սպառազինութեան ծանրութիւնից յոգնած սկսան տատանուիլ: Յովհանն նկատեց իւրայիններէ թուլանալն ու մղուեց պատերազմի մէջ, ուր իւր անձնական քաջութեան օրինակով սիրտ տուաւ ամէնքին: Նոյն ժամայն հրամայեց զօրքին ջուր ու դինի բաժանել, որ շունչ առնեն: Ոգի առած յոյներն սկսան կրկին յառաջ մղուել, բայց թշնամիք տեղի չը տուին և ճակատի ելքը մնաց անորոշ: Կռիւր մղուում էր քաղաքի դռներէ առաջ, ուր հեծեալների համար տեղ չը կար շարժուելու: Կայսրը հրամայեց իւր հեծելազնդին փախուստ ձեացնել և թշնամուն քաշիլ դէպի դաշտը: Եւս նենդութիւնը յաջողուեցաւ: Վարեգները կարծելով թէ յոյները փախչում են, սկսան հալածել նրանց և դաշտին հասնելով ստիպուեցան դէմ դնել փախստից յետ դարձող յոյներին: Սրանց զօրավարն էր Թէոֆոր Միսթացին, որ յանկարծ վայր գլորուեցաւ և մնաց ձիու տակ: Նրա շուրջը կատաղի կռիւ սկսաւ, բիւզանդացի զօրավարը մեծ ուժի տէր լինելով բռնեց մի վարեգի գօտուց և իբրև Վահան պաշտպանուեց նրանով իւր վրայ տեղացող հարուածներից, մինչև հասաւ իւրայինների մօտ իւր տարօրինակ դերու հետ միասին: Դեռ անորոշ էր կռուի ելքը: Նրկու բանակներն ևս մի առ ժամանակ կանգ առան: Այս միջոցին կայսրը կամենալով խնայել իւրայիններէ աւերելը մի փորձ ևս արաւ, նա դիմեց Սվետոսլաւին բանբերի միջոցով և ասաց. «Աւելի լաւ է մեր կռիւն աւարտենք երկուսներեցս մէկի մահուամբ, քան թէ ամբողջ ազգի կորստով միայն մի մարդու օգուտը ձեռք բերենք»: Այս առաջարկութեան Սվետոսլաւը յանդգնութեամբ պատասխանեց, որ նա կարիք չ'ունի իւր թշնամու խորհուրդներին, որ ինքը զիտ է իւր անե-

լիքը, որ եթէ յունաց կայսրը ձանձրացել է կեանքից, շատ միջոցներ կան կեանքից ազատուելու, որ նա կարող է ընտրել, իսկ ինքը կամենում կուիւր շարունակել:

Այս մեծամիտ պատասխանից յետոյ Յովհաննը վճռեց մշտն-դամից վերջ դնել այս կռուին: Վարդ Սկլերոսին իւր գնդով ուղարկեց գրաւելու քաղաքի և վարեգների բանակի միջավայրը, որպէս զի կտրէ վարեգների փախստեան ճանապարհը, միևնոյն ժամանակ հրամայեց Ռոմանոս պատրիկին, Ռոմանոս Լեկապէն հայ կայսեր թոռանը և Պետրոս զօրավարին վարեգների ճակատը զրաւելու. կռիւը վերսկսաւ, բայց մնաց անորոշ: Անեմոս կրետացին վստահ իւր երեկեան յաջողութեան վրայ, դուրս եկաւ Սվետոսլաւի դէմ, որ իւր գունդը վառելու համար յառաջ անցած յարձակուել էր յոյների վրայ: Մի հարուածով նա ձիուց վայր է գլորում Սվետոսլաւին, բայց չէ կարողանում սպանել նրան, սպառազէնը չէ թոյլ տալիս, որ թուրը մարմնին դիպչի: Վարեգները վրայ են թափուում և Անիմասին ձիուց վայր գլորելով յօշոտում են տապարներով: Այս յաջողութիւնից սերտ առած սրանք կրկին մեծ թափով խուժում են յոյների վրայ: Կայսրը անցնում է Անմահների գնդի գլուխն և անձնական քաջութեան օրինակով նորից վառում իւր զնդերը. նոյն վայրկեանին մի երկնային նշան—ինչպէս հաւատում էին բարեպաշտ բիւզանդացիք—խրախուսեց նրանց, երկինքը ծածկուեցաւ ամպերով և մի սաստիկ փոթորիկ բրդաւ:

Փոշու ամպերը ծածկեցին վարեգ զօրքի աչքերն և նոյն ժամայն մի այլ հրաշք ողի տուաւ յոյներին և երկիւղ աղդեց հակառակորդներին. երկու բանակներն ևս պարզապէս տեսան, որ մի սպիտակագգեստ հեծեալ հռոմէների բանակի գլուխն անցած դիմում էր դէպի վարեգները: Սպիտակագգեստ հեծեալն ընկաւ վարեգների շարքերի վրայ և սկսաւ կոտորել. նրան հետևեցին յոյն զօրքերն և յաղթութիւնը տարան: Ճակատամարտից յետոյ աներևութացաւ այդ քաջն և չը նայելով, որ կայսրը շատ փնտռել տուաւ, որ շնորհակալութիւն անի, բայց չը գտաւ: Ամենքն էլ հաւատացին, որ դա սուրբ Թէոդորոս զօրավարն էր, որի տօնն էր այդ օրը: Թէոդոր զօրավարը բիւզանդական բանակի հովանաւորն էր, սրան շատ էր յարգում Չմշկիկն և ամէն անգամ պատերազմի գնալիս օգնութիւն էր կոչում իրեն և համարում էր իւր պաշտպանը: Աւանդում

են իսկ, որ Կ. Պօլսի մայրապետներէց մէկը տեսիլք է ունեցել, որի մէջ Տիրամայրն երևացել և հրամայել է սուրբ Թէոդորօսին օգնութիւն հասնել Յովհաննին: Այս հաւատն աւելի ամրացնելու համար Չմչիկին ապագայում այդ սրբի վկայարանը վերաշինեց և Նւքանայա քաղաքի անունն ևս, ուր այդ վկայարանն էր, փոխեց Թէոդորոսօլիս:

Ինչ էլ կուզէ լինի, թէ արդեօք Յովհանն և իւր զօրքը տեսան այս սուրբ զինակցին, թէ դա մի բարեխղաղ խաղ էր Յովհանի կողմից իւր զօրքի հռանդը վառելու համար, այսքանը հաւաստի է, որ դրա շնորհիւ յաղթեցին յոյները: Հակառակորդները զօրքը պաշարուելով ամեն կողմից ցրուեց և փախստի ժամանակ ոտնատակ եղաւ, այդ օրը գրեթէ բոլոր վարեզ զօրականները, որ կենդանի մնացին, վիրաւորուած էին, նոյն իսկ Սվետոսլաւը: Լեոն Սարկաւագի չափազանցութեամբ այդ օրը ընկան տասն և հինգ հազար վարեզներ, մինչ յոյները կորցրին երեք հարիւր յիսուն մարդ:

Սվետոսլաւն իւր զօրքի մնացորդով փախուեցաւ քաղաքում և ամբողջ գիշերն անցրեց բարձրաձայն ողբով: Յուսահատութիւնը տիրեց վարեզներին, նրանք վճռեցին հաշտութիւն խնդրել: Սվետոսլաւը յուլիսի 25 ի առաւօտը դնսականներ ուղարկեց Յովհանի մօտ և հաշտութիւն խնդրեց: Նա խընդրում էր թոյլ տալ իրեն թողնել Բոլղարիան և հեռանալ իւր բանակի մնացորդներով, վարեզներին կրկին ընդունել կայսրութեան ըարեկամների շարքն և իրեն պաշար տալ վերադարձի համար: Նա խոստանում էր չը յարձակուիլ ալ ևս Քերսոնիսի վրայ, որ բիւզանդական հիւսիսային կալուածներէց միակ մնացորդն էր, միննոյն ժամանակ խնդրում էր թոյլ տալ և վարեզներին ազատ առևտուր անել Կ. Պօլսի հետ: Քսան երկու հազար հոգի էին մնացել Սվետոսլաւի զօրքից, որոնց պաշար տալով կայսրը թոյլ տուաւ իրենց մակոյկներով անցնել Դանուբի միւս կողմը: Խաղաղութեան դաշն հաստատուելուց յետոյ կայսրը տեսակցութիւն ունեցաւ բարբարոսների իշխանի հետ: Սվետոսլաւի փորձանքները դեռ վախճան չէին աւելի, հասնելով գրեթէ իւր հայրենիքի սահմաններին, նա սպանուեցաւ պաժէնէզներէց, որոնք այս մեծ արշաւանքի մնացորդները ոչնչացրին 973 թուին. Սվետոսլաւի կառաւիից մի արծաթապատ ըմպանակ չինեցին այս վայրենիք:

Յաղթական կայսրը վերանորոգել տուաւ ավերուած ամրոցները, Բոլղարիայում զինուորական վարչութիւն հաստատեց և շտապեց դէպի մայրաքաղաքը: Կայսեր յաղթական ընթացքին շուք էին տալիս բոլղար թաւաւորազն գերիք և փարթամ աւարը, որի մէջ նշանաւոր էր Տիրամօր մի հռչակաւոր պատկերը: Այս պատկերը մինն էր այն ժամանակներում այնքան հռչակաւոր «Անձնագործ» պատկերներից, որ երկար ժամանակ իբրեւ հրաշագործ սրբութիւն յարգուում էր բոլղարների մայրաքաղաքում:

Յովհանը մուտք գործեց քաղաքի Ոսկէ դռներից: Յաղթանակի հանդէսը տեղի ունեցաւ օգոստոսին: Բիւզանդական բոլոր հանդէսները քիչ շատ նման են միմեանց, դրանց մէջ առաջին տեղը գրաւում էր հոյակապ չքաւումը բազմաթիւ պաշտօնէութիւններից, զինուորականներից, հոգևորականներից, գերիներից և զօրքերից: Հանդիսին շուք էին տալիս երգերը, ցնծութեան աղաղակները, երաժշտութիւնն ու ճառերը: Չմըշկիկն այնպիսի մեծ գործ էր կատարել, որ անշուշտ նրա յաղթանակն առանձին փայլ պիտի ունենար, նա կայսրութիւնը փրկել էր կորստից, գրաւել էր մի ամբողջ թագաւորութիւն և տէրութեան սահմանը կրկին հասցրել էր Դանուբին, որ այնքան տարի խլուած էր յոյներից: Քաղաքի ամբողջ ամբողջապէս, բոլոր քաղաքացիք ծաղկապսակ դուրս եկան պարսպներից միւս կողմը պատրիարքի, հոգևորականութեան, պալատի և ծերակուտի առաջնորդութեամբ, որոնք ամենքն էլ իւր անունն էին փառաբանում, երգում էին սուրբական օրհներգները, նրան ընծայում էին պսակներ, ոսկեղէն և ակներով ընդելուզած դայտոններ: Այս ընծաները մատուցանում էին քաղաքի մեծամեծները. իսկ ժողովուրդը նուիրում էր միայն ծաղկէ պսակներ: Մեծ յաղթանակի կարգով նա պէտք է քաղաք մտնէր մի հին ձևի կառքով, որին լծած էին 4 ճերմակ ձի: Յովհանն իւր բարեպաշտութեան մի օրինակ ևս տուաւ, նա հրաժարուեցաւ կառք նստել, այլ կառքի վրայ բազմացրեց իւր աւարի թանկագին գոհարը, Տիրամօր հրաշագործ պատկերն, իսկ ինքը նժոյգ հեծած մտաւ քաղաք: Կարելի է երևակայել, թէ ինչ ազդեցութիւն գործեց ինքնակալի այս համեստութիւնը բարեպաշտ բիւզանդացոց վրայ: Պճնուած քաղաքի փողոցներով թափօրն հասաւ մայր եկեղեցին, ուր գոհաբանական ա-

զօթքներէից յետոյ, կայսրն իւր ձեռքով եկեղեցուն ընծայեց բոլարական թագաւորական թագը:

Սկեղեցուց դուրս գալով կայսերական թափօրը մի առ ժամանակ կանգ առաւ Աւգուստէոնի հրապարակում, ուր մի եղբերական հանդէս կատարուեցաւ: Խռնուած ժողովրդի առաջ կայսրը իւր առաջ բերել տուաւ բոլարների երիտասարդ թագաւոր Բորիսին, որ հետիոտս հետեւէ՝ էր կայսեր յաղթական ընթացքին: Սրբ գահավէժ իշխանը կանգնեց Յովհաննի առաջ, նա հրամայեց, որ Բորիսն իւր ձեռքով վայր դնէ իւր թագաւորական պատուի նշանները: Իժմախո գերին մի առ մի վայր առաւ իւր թագը, ակներով ընդելուզեալ ծիրանին և կարմիր կօշիկները հանեց, որ բոլար թագաւորները կրում էին յոյն կայսրների պէս: Այս քաղաքական հանդէսը նրա համար էր, որ կնքէ Բոլղարիոյ կայսրութեան հետ միացումն, բայց որովհետեւ ինքը կայսրը միշտ մեղմ և զթոտ էր, ուստի անմիջապէս Բորիսին մագիստրոսութեան պատիւը տուաւ: Բորիսի միւս եղբայրը, Ռոմանոսն աւելի սոսկալի միհակի ենթարկուեցաւ, նրան ներքինացրին: Այսպէս վերջացաւ բոլարական առաջին հարըստութիւնը:

Գրաւուած Բոլղարիան կայսրութեան հետ միացնելու և նրա սահմաններն ապահովելու՝ համար Յովհանը գործ դրաւ այն միջոցը, որ սովորական էր կայսրութեան մէջ: Կայսեր հրամանով Պաւլիկեան աղանդաւորները, այս բարեկէլի կալվինականները, խլուեցան իրենց հայրենի հողից, Փոքր Հայքից, և տեղափոխուեցան Թրակէ: Ֆիլիպպոպոլի գաւառը բալկանների ստորոտը: Թէ այս քաղաքի և թէ ամբողջ երկրի զինուորական պահպանութիւնը յանձնուեցաւ դրանց: Այս աղանդաւորներին տեղափոխելն իբրեւ թէ Յովհանը կատարել է Անտիոքի Թովմաս պատրիարքի խորհրդով, ինչպէս ասում է Սկիւտիսը, թէ պէտ և պատմութեան բոլոր ընթացքից երևում է, որ դա մի սխառտ էր և ոչ թէ լոկ բարեպաշտական դործ: Պաւլիկեանները վտանգաւոր էին արևելեան սահմաններում, որովհետեւ նրանք իբրեւ հալածուած աղանդաւորներ դաւաճանել կարող էին յոյներին և բարեկամանալ սարակինոսներին, մինչդեռ արևմուտքում նրանք ամրակուռ պարիսպ էին պետութեան համար ընդդէմ վայրենի կռապաշտների: Պաւլիկեանները նշանաւոր և յանդուգն զօրականներ էին: Սրանք միանալով իրենց

ցեղակից հայերի հետ, որ նոյնպէս դաղթեցրած էին այս կողմերը, բռնացան տեղացիներին վրայ և տարածեցին իրենց աղանդը։ Այս արիւնածարաւ աղանդաւորները դեռ ևս կային չորրորդ խաչակրաց ժամանակ, որոնք դրանց մնացորդներին ոչնչացրին։

Չմշկիկը յաղթանակից յետոյ ամբողջ ձմեռը հանդէսներ տուաւ ժողովրդին և առատութեան մէջ պահեց այդ միշտ դժգոհ ամբոլիւր, իբրեւ ճշմարիտ հայր իւր հպատակներին նա վերցրեց ամբողջ կայսրութեան երկրներից ատելի «ծխահարկը», որով նրա ժողովրդականութիւնը մեծ ծաւալ ստացաւ։

Իւր բարեպաշտութեան մի այլ օրինակ ևս տուաւ Կիւ ժանը, նա իւր դրամներին վրայ սկսաւ Փրկչի պատկերը կոխել տալ, իսկ հակադարձ երեսին վրայ դրօշմել տուաւ «Յիսուս Քրիստոս թագաւոր թագաւորաց»։

ԳԼ. Ժ.

ՉՄՇԿԻԿԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԽԱՆԲԸ ՍԱՐԱԿԻՆՈՍՆԵՐԻ ԴԷՄ

Արևմտեան սահմաններում միայն վարեգների հետ չէր կայսրութեան կռիւը, Նիկիւփոր Փոկասի վերջին տարիները բիւզանդացիք ստիպուել էին Սիկիլեան թողնել արաբների ձեռքին, որոնք այդ կղզուց անդադար արշաւանքներ էին գործում Իտալիա և աւերում կայսրութեան դաւանները։ Իտալիայում մի աւելի մեծ ոսոխ ունէին սրեկեան կայսրները՝ դա էր Գերմանիոյ հռչակաւոր Ոթոն Ա. կայսրը։ Սրա քաղաքական ծրագիրն էր իսկապէս տէր դառնալ արևմտեան կայսրութեան, ամուսնացնել իւր որդի Ոթոնին մի ծիրանեծին իշխանուհու հետ և իբրեւ օֆիտ Իտալիան ձեռք բերել։ Այս խնդրի մասին բանակցութիւնները շատ անյաջող ելք էին ունեցել Նիկիւփորի հետ, որի մահուամբ կրկին նորոգուեցաւ, Չմշկիկն իւր ձեռքերն ազատ պահելու համար համաձայնեց գերմանական թագաժառանգին տալ Ռոմանոս Բիւի Թէոփանոսի դուստր (Թէոփանոյին *)

*) Բիւզանդացի ժամանակագիրները լռում են այդ մասին, այս ամուսնութեան վերաբերութեամբ տեղեկութիւն ունինք միայն արևմտեան աղբիւր-

առանց որ և է օժտի: Այսպիսով 973 թուին Իտալական խնդիրն ևս լուծումն առաւ, մնաց յաւիտենական կռիւը սա-
րակինոսների հետ դեռ ևս շարունակելի:

Կայսրութեան արեւելեան սահմանազխում վիճակը հետե-
ւեալն էր. Նիկիւփոր Փոկասի մահուան տարին յաղթական բիւ-
զանդացիք դրաւել էին Հալէպն ու Անտիոքը, որի առումը մեծ
ցաւ էր պատճառել ամբողջ մահմէդական աշխարհին: Չմշկիկի
գահակալութեան տարուայ, 970 թուից սկսուած մի մեծ դաշ-
նակցութիւն կազմուեցաւ յունաց դէմ, այդ դաշնակցութեան
մէջ էին բոլոր մահմէդական երկրները, Նգիպտոսը, Պարսկաս-
տանը, Սաւմացիք և ամբողջ Արաբիան: Հարիւր հազար իսլամ
զօրք խմբուեցան Էմիլ Ջոհարի հրամանատարութեան տակ, որ
եկաւ Անտիոքը պաշարելու: Ջոհարը Մուիզ ամիրայի զօրա-
վարն էր, որ նոր էր հաստատել իւր աթոռը Կահիրէում, նա
ինքն անձամբ չէր դուրս եկել բիւզանդացոց դէմ, այլ ուղար-
կել էր իւր ստորադրեալներից մէկին Անտիոքն առնելու: Ան-
տիոքը հինգ ամիս պաշարեցին եգիպտացիք և առնել չը կա-
րողացան, նրանց հեռանալուց յետոյ երկրաշարժը կործանեց
Անտիոքի պարիսպների մի մասը, որը նորոգելու համար Չմշկի-
կըն ուղարկեց Միքայէլ Ալբուրջիին 12,000 զործաւորներով և
որմնադիրներով, որոնք վերաշինեցին պարիսպն և Միքայէլ իշ-
խանը դարձաւ դուքս Անտիոքի: Նոյն տարուան ընթացքում
բիւզանդացիք խեցին սարակինոսներից և նշանաւոր Մանադ-
կերտ բերդը Հայաստանում: Աբուլֆէդա արաբ ժամանակա-
դիրն ասում է. «ամբողջ ծովեզրեայ Ասորիքն և Նվիրատի եզեր-
քներն յունաց ձեռքն էին անցել, ոչ ոք չէր մնացել դրանց
ետ մղող, այլ ևս ոչ ոք չէր պաշտպանում այդ երկիրը նրանց
դէմ և երկիրը դատարկ էր բոլորովին պաշտպաններից»: Յունաց
այս գերակշռող դիրքը միանգամից խախտուեցաւ ֆաթմեան տան
խալիֆի Նգիպտոսում հաստատուելով, որովհետև նրա հռչակաւոր

ներից, որոնց մէջ սակայն կասկածի ձայներ ենթ լսում, որ Չմշկիկը խաբէւ է
Ութմին և փոխանակ ծիրանածին կայսրուհի ուղարկելու արեւմուտք, իւր ազ-
գականներից մի աղջիկ է ուղարկել: Եթէ ճշմարիտ է այս ենթագրութիւնը,
այն ժամանակ պիտի ընդունենք, որ գերմանական նշանաւոր Թեոփանո կայս-
րուհին, որ ապա իբրեւ խնամակալ իւր մատաղ որդու մեծ հռչակ հանեց, մի-
հայրուհի էր:

ափրիկեցի զօրքը կամ ինչպէս կոչուում էին մսղորէայները հեղեղեցին Պաղեստինն ու Ասորիքը:

Զմէկիկը 973 թուին սկսեց պատրաստուել սարակինոսների դէմ. այս պատրաստութիւնը տեւեց մի տարի ամբողջ, յաջորդ տարին, 974 թուին միայն նա արշաւեց դէպի Ասորիք: Մինչև կայսեր արշաւանք սկսելը յոյները մեծ պարտութիւն կրեցին, երևի 973 թուին: Այս մասին յոյն տարեգիրները լռում են, դրանց փոխարէն արաբ Աբուլֆարջն ու հայ տարեգիր Ասողիկն ու Մատթէոս Ուռհայեցին պատմում են. «կայսերական արևելեան զօրաբանակի հրամանատար Մլեհը (անշուշտ հայ) անցաւ վերին Նփրատից միւս կողմն ահագին բանակով, նոյն 973 տարուան ընթացքում մտաւ Միջագետք և մի անգամ ևս աւերեց և ասպատակեց այդ թշուառ երկիրը: Նա սարսափելի կերպով աւերեց Նդեսիոյ շրջակայքը 22 օր շարունակ, այրեց ու ոչնչացրեց հարուստ ցանքսերը Նփրկերտի և Նդիսիոյ: Իւր այս յաջողութիւններով գոռոզացած Մլեհը պաշարեց Մալաթիան կամ, ինչպէս Ուռհայեցին է ասում, Տիգրանակերտը, որ առաւ Ապա նա Համեդ քաղաքը պաշարեց, ուր սակայն մեծ պարտութիւն կրեց, Ուռհայեցու ասելով պարտութեան պատճառը մի սոսկալի փոթորիկ էր: Մլեհը գերի բռնուեցաւ իւր սպայակոյտով և ուղարկուեց Բաղդադի խալիֆայի մօտ, ուր նրանք դաւաճանութեամբ սպանուեցան: Մլեհն իւր գերութիւնից մի թուղթ գրեց Զմէկիկին դրդելով նրան դէպի վրիժառութիւն: Այս պարտութեամբ յոյները կորցրին իրենց նոր գրաւած երկրներն և Զմէկիկն այս դրութեան մէջ սկսաւ իւր արշաւանքը:

Բաղդադի խալիֆն այդ ժամանակ մի աննշան և թուլամորթ մարդ էր, նա կոչուում էր Ալոմոթի, որ խաղաղք էր իւր թիկնապահների զօրագլխի, ագա՝ բախտիար էմիրի ձեռքին: Մլեհի արշաւանքի առաջ փախչողների ահագին բազմութիւն կուտուել էր Բաղդադում, որոնք խռովութիւն յարուցին և պահանջեցին, որ Ալոմոթին պատերազմի դուրս գայ յոյների դէմ, սակայն նա պարզապէս խոստովանուեցաւ իւր անկարողութիւնը, իսկ բախտիարը խաբէութեամբ համաձայնուեց գլուխ կանգնել պատերազմի, եթէ իրեն կարևոր դրամը տային, խեղճ խալիֆը վաճառքի հանեց իւր պալատի գանձերն ու զգեստները, սակայն եղծաւոր բախտիարը այդ դրամը գրաւեց և էլի շարունակեց

անգործ նստել, Ահա թէ ինչ աստիճանի ընկած էր այդ ժամանակ Բաղդադի ամիրան և թէ ֆաթմեան նոր հարստութիւնը չը ծագէր Նգիպտոսում, սարակինոսներն ընդ միշտ ընկած կը մնային:

Նգիպտական ամիրապետի զօրքերը գրաւել էին արդէն Դամասկոսը, խռովութիւնը խախտել էր Բաղդադի խալիֆի զօրութիւնը, Համգանիդների երկրները դեռ ևս ճանաչում էին կայսեր գերիշխանութիւնը, բայց Մլեհի պարտութիւնից յետոյ խախտուել էր և յունական զօրքի հեղինակութիւնը, ուստի կայսրը սէտք է շտապէր, այս թէ ոչ մահմեդականութիւնը կը միանար և այն ժամանակ անհնարին կը լինէր դիմադրել նրան: Մի այլ աւելի բարձր նպատակ ևս ունէր այս «քրիստոսասէր» իշխանը, նա կամենում էր Նրուսադէմը նուաճել և բոլոր քրիստոնէից այս ցանկալի սրբավայրը խել անհաւատների ձեռքից:

«Այսպիսի էին այն բարեպաշտ և փառահեղ ծրագիրները, որոնք անցնում էին այս դիւցազն հայ պապականորի մտքից, որ յաղթել էր վարեգներին և նուաճել բոլրաւորներին: Նոյն այս ծրագիրներն ունեցել էր Նիկիփոր Փոկասը, որ սրանից պակաս դիւցազն չէր»: Խաչակրութիւնից հարիւր տարի առաջ այս հայն ունեցաւ այն ծրագրերը, որ նրանք իրագործեցին: Չմշկիկի համար կրօնական նպատակներին կից նշանակութիւն ունէին և կայսրութեան օրինական իրաւունքներն այդ երկրների վրայ որի համար այնքան դար կուռում էին բիւզանդացիք:

Չմշկիկի պատրաստութիւններն ահագին էին, այդ գիտէին թէ արեւելքում և թէ արեւմուտքում: Իտալական քաղաքներից Վենետիկը, Պիզան և Ամալֆին ընդարձակ վաճառականութիւն ունէին արևելքի հետ և իբրև կայսրութեան գերիշխանութեան տակ գտնուող քաղաքներ նրանք ևս պարտական էին օժանդակելու բիւզանդացոց, ուստի և Վենետիկի դոժը մահուան երկիւղով արգելեց վենետիկեցոց սարակինոսներին գէնք, նաւափայտ և առ հասարակ սլատերազմական պիտոյք վաճառելը: Այսպիսի արգելքներ շատ էին դրուել, սակայն իտալական վաճառականների ազահութիւնը միշտ խոյս էր տուել հպատակելուց: Մեզ է հասել այն վաւերաթուղթը, որ պարունակում է Վենետիկի հասարակապետութեան վճիռն այս արգելքը դնելու: Այս վաւերաթղթի մէջ մեծ յարգանքով և երկիւղով է յիշուած Յովհան կայսրը, Այս վաւերականի հետաքրքրական կէտերից մէկն էլ այն

է, որ մենք դրանից իմանում ենք, որ այդ դարում մահմեդականները զէնքերն ստանում էին Ներսիսայից, որովհետեւ Դամասկոսի յայտնի զէնքերը շատ սուղ էին: Վենետիկցիք էին նոյնպէս բոլոր նաւատորմի փայտն ու այլ պիտոյքները մատակարարողը: Վաճառականութեան ոգին նոյնն էր ժ. դարում, ինչպէս և մեր դարումն է, Վենետիկ բարեպաշտ կաթողիկոսներն էին ամեն տեսակ զէնք մատակարարում քրիստոնէութեան կատաղի թշնամեաց:

Պատմագիրներն յաճախ խառնում են Չմշկիկի երկու արշաւանքները սարակինոսաց դէմ, պէտք է որոշել դրանց միմեանցից, առաջին արշաւանքը տեղի ունեցաւ 974 թուին և դրա ասպարէզն էր Միջագետքը, իսկ երկրորդը 975 թուին, սրա ասպարէզը դարձաւ Ասորիքը:

Արաբ բիւզանդական պատերազմները միշտ նոյն ձևով էին վարում. գարունը բացւում էր թէ ոչ, յոյն զօրքերը հեղեղի պէս թափւում էին մահմեդական երկրներէ վրայ, աւերում կողոպտում, գերում, այրում, կոտորում, հարկեր դնում, նոր դաշինքներ կնքում և յետ դառնում: Հազիւ թէ բիւզանդացիք հեռանում էին, որ մուսուլման մոլլաներն ու գերովիշները սկսում էին սրբազան պատերազմ քարոզել, որով ոգևորում էին ամէնին, դրժելով կապուած դաշինքներին, սրանք կրկին ապստամբում էին և այսպէս կրկնում էր ամեն տարի նոյնը: Չմշկիկը մտածեց այս անգամ վերջ դնել Բաղդադի մերձիմահ ամիրապետութեան և արշաւեց մեծ զօրքով դէպի Միջագետք: Բիւզանդական բանակն այս անգամ մեզ անհասկանալի պատճառներից դրդուած մուտք գործեց Հայաստան: Չմշկիկն աւցաւ Նփրատը, մտաւ Տարսն և բանակ դրաւ Այծից բերդի զմացը: Ահա թէ ինչ է պատմում այս մասին հայ ժամանակագիր Մատթէոս Ուռայեցի. «Յայնժամ (յամին ՆԻԱ=972) ամենայն թագաւորազունքն Հայոց՝ աղքատքն և իշխանքն և ամենաւն մեծամեծքն աշխարհաց տանն արևելքից ժողով արաւրին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն կապանին ֆրիլպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձևացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասնու և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրև ութսուն հազար: Սև եկեալ հրեշտակ թաղաւորին Հռուսոց առ նոսա և տե-

սին պատրաստական դամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցից թագաւորին Ձմէկանն. գնացին և իշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հոռոմոց իմաստասէրն Լևոն և Վմրատ իշխանն թուռնեցին և այլ եպիսկոպոսք և վորդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտայ արքային Հայոց: Եւ դայր խաղայր թագաւորն Ձմէկիկ տառքին բաղմութեամբ և հասանէր ի Տարոն գաւառ Հայոց և իջեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. եւ յառաջին գիշերն բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու (Սասնոյ) և եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց և մատուցանէին առաջի նորա զթուղթ Վահանայ Հայոց կաթողիկոսին: Եւ թագաւորն առեալ ընկալաւ զնա և յոյժ մեծարեաց զթուղթն և զբերողն և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք եւ ինդրեաց զօրս յԱշոտայ դալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր պատերազմողս իբրև տասն հազար, խնդրեաց կերակուրս, ոռնիկս. և դամենն տուեալ նմա Աշոտ: Եւ զվարդապետն Հայոց Ղևոնդ, զեպիսկոպոսս և զիշխանսն մեծաւ պարգևօք յուղարկեաց առ Աշոտ թագաւորն Հայոց»:

Պարզամիտ Ուռհայեցու այս տողերը մութն են. մեզ անյայտ է մնում, թէ ինչո՞ւ հայ թագաւորներն ու իշխաններն այն տառքին բանակն էին կազմել Տարօնում, ինչ էր տէր Վահան կամ Վահանիկ գահավէժ կաթողիկոսի մասնակցութիւնն այս գործում, ինչո՞ւ սաստնցիք կայսեր զօրքի վրայ յարձակուեցան: Ահա թէ ինչպէս է բացադրում այս դէպքերը Ֆրանսիացի պատմաբանը, որի բացադրութիւնները շատ հաւանական են թւում: Բացադրելով տէր Վահանի դերը և Հայաստանի վիճակն այս շրջանում *), Շիւմբերտէն շարունակում է. «Բոլոր այս պատմութիւնն այնքան պարզ չէ, ինչքան ցանկալի էր: Շատ ափսոս, որ այս դէպքերի վրայ մենք այլ ոչ մի տեղեկութիւն չունենք, բացի վերոյիշեալ հակիրճ տեղեկութիւններից: Ահա թէ ինչպէս է թւում ինձ իրերի ընթացքը: Այդ ժամանակ երկու կուսակցութիւն կար այդ Հայաստան աշխարհում, ուր կրօնական խնդիրներն ամեն ժամանակ մեծ

*) L'Épopée Byzantine, Երես 244—252.

տեղ են բռնել, մէկ կուսակցութիւնը դահալէժ Վահան կաթողիկոսի և յունաց հետ հոգևոր միութիւն պահելու կողմն էր—դա կայսեր նպատաւոր կուսակցութիւնն էր—միւսը կըրթոտ թշնամի կուսակցութիւնը, կամենում էր յառել բիւզանդական եկեղեցուց բաժանման վիճակի մէջ, Հաւանօրէն, երբ իրերը վատ ընթացք էին սպառնում, արքայից արքայ Աշոտը, Վասպուրականի թագաւորը, և միւս հայ իշխանները զէնք առին և ժողովեցան Յփրատի ափունքի մօտ—կայսեր շարժողութիւնների վրայ հսկելու համար, որովհետև նա կամենում էր Հայաստանը խաղաղացնել Բաղդադի վրայ գնալուց առաջ: Այդ տեղ եկան կայսեր բանբերները հայ անագուկատին բերելով որևէ վերջնագիր (ultimatum): Այդ բանբերներին յետ ուղարկեցին հայ դեսպանների հետ միասին, որոնց պարագլուխ էին Լևոն փիլիսոփան և Սմբատ իշխանը: Այս անձինք շատ սիրով ընդունեցան Կոստանդնուպօլսում, և խաղաղութեան սկզբնական պայմաններն ստորագրուեցան: Ապա, Վասպուրը հեռանալով մայրաքաղաքից, արշաւանքն սկսաւ, հայ դեսպաններին հետն առած: Յփրատի միւս եզերքին նրան սպասում էր Հայոց դօրքը, որ 80,000 մարդուց էր բաղկացած իւր գլուխն ունենալով արքայից արքային և իւր հպատակ ու դաշնակից հայ իշխաններին:

«Յրկու հակառակորդ կուսակցութիւնները դէմ առ դէմ էին կանգնած այս հայկական բանակում: Մի կողմից մենք տեսնում ենք, որ սասունցիք, նոյն իսկ կայսերական բանակի հասնելու գիշերը, փորձ են անում արգելելու նրանց մուտքը հայոց հողը, միւս կողմից տեսնում ենք հայոց արքայից արքային և աւագակոյտն, որ կայսեր վերջնական խաղաղութեան առաջարկներ է անում, որին կցուած է լինում Վահան դահալէժ կաթողիկոսի նամակը, որովհետև նա դեռ ազդեցիկ էր շատ, Վահանն երևի միջնորդում էր Յովհանի առաջ յօգուտ իւր ազգի: Յովհան Չմշկիկը, Կիւ ժանը, ինչպէս նրան անուանում են միշտ հայ պատմագիրները, յիշելով իւր հայկական ծագումը, միշտ ձգտելով խաղաղ միջոցներով կառավարելու, ամենալաւ ընդունելութիւն է անում հայոց, և մի վերջնական խաղաղութեան դաշն է կուռում կայսեր և հայոց շահնշահի միջև: Կայսերական բանակին հայերը պաշար են մատակարարում: Մի բազմաճիւղ դօրախումբ տրուում է նրան իբրև օգնական գունդ:

Սարակինոսաց դէմ կռուելու Շատ հաւանական է, որ այս թանգազին օժանդակութիւնը ստանալու ցանկութիւնը, որովհետեւ հայ զօրքերը քրիստոնեայ Արեւելքի ամենից լաւագոյններն էին համարուում, մեծ նշանակութիւն ունէր Ձմիկիկի դէպի հարաւ արշաւանքի այս ընթացքի փոփոխութեան մէջ, չը նայելով որ դրանով հեռանում էր նա շատ դէպի արեւելք:

«Աշոտ Գ. Ողորմածը, որի հետ այս դաշը կռեց կայսրը, և որ իւր հօրն Աբասին էր յաջորդել, համարւում է իւր ազգի թագաւորներից ամենից լաւն ու բախտաւորը: Հայաստանի գտնաւորան կողմերը սրա իշխանութեան տակ հասել էին իրենց զօրութեան բարձրագոյն կէտին: Նրբէք հուշակաւոր Բագրատունիք սրանման փառաւոր ներկայացուցիչ չէին ունեցել: Բոլոր հայ նախարարները, Վասպուրականի թագաւորը, բոլոր դրացի իշխանները, ինչպէս և շատ մահմէդական էմիրներ ճանաչում էին առանց հակառակելու Շահի Սըմէնի գերիշխանութիւնը, որի մեծութիւնը շատ էր աճել Բաղդադի ամիրապետութեան անկումի: Սա իսկ այս Բագրատունու հետ իբրեւ հաւասարի հետ էր վարուում, և 961-թուին, Աշոտի Համդունի թոռն Սէյֆ Եղդուլլայի վրայ տարած յաղթութեան պատճառով տուել էր նրան Շահի Սըմէն տիտղոսը Աշոտ Գ. մի բարեպաշտ իշխան էր, աստուածաբան, նաև, ինչպէս յիշել եմ, մեծ աշխարհաշէն: Սրա թագաւորութեան ժամանակ, եկեղեցիք, վանքեր, պալատներ, ամենքն էլ քարաշէն գեղեցիկ և զարդարուն շէնքեր, արձանագրութիւններով և սիրուն քարերով պննուած, կանգնեցին ամենուրեք, ծածկելով իրենց տարօրինակ բայց նկարէն բազմութեամբ Հայաստանը: Սա ինքն էր որ Անին դարձրեց իւր երկրների հուշակաւոր և փարթամ մայրաքաղաքը, որ գեղեցկացրեց հայ քաղաքների այս թագուհուն, իւր ցեղի զօրութեան օրօրանը, այս տիտղոս դաշտի վրայ, ուր ոչ ոք ինչպէս և այն ժամանակ հեղեղատ Սխուրեանը թաւալում է իւր ալիքները: Նոյնպէս սա ինքն և իւր թագուհին կանգնեցին շատ բարեպաշտական շէնքեր մայրաքաղաքի շրջակայքում, այսպէս 973-ին կաթողիկոսի հետ միասին, շինեցին Արգինայի սիրուն մայր եկեղեցին, ուր առաջին անգամ հանդէս է գալիս բոլորի գմբէթը, որ մինչև այն ժամանակ անծանօթ էր Հայաստանում: Աշոտը մեռաւ 977-ին, Յովհան Ձմիկիկից մի տարի ետքը, քսան և վեց տարի յաջողակ և նորոգիչ թագաւորութիւն անելուց յե-

տոյ: Դժբախտաբար, հաւատարիմ հայ Բազմադասութեան իշխաններ յաւաքի սովորութեան բաժան բաժան անելու իրենց ժառանգութիւնը, նա սխալուել էր մեծապէս թուլացնելով իւր գորութիւնը 962 թուին Ղարսում թագաւորացնելով իւր եղբայր Մուշեղին:

Աշոտի հետ խաղաղութեան դաշը կռիւց յետոյ անմիջապէս կայսրն արշաւեց Միջագետք. դա 974 թուականի արշաւանքն էր: Մեր տեղեկութիւններն այս արշաւանքի մասին չառ սակաւ են, չփոթ և հակասական. ահա թէ ինչ է պատմում Ուռհայեցիին.

«Յայնժամ Չմշկիկ՝ որ ասէին Կիւ ժան, դարձաւ ի պատերազմ ի վերայ տանկաց և մեծաւ յաղթութեամբ և սրտմտութեամբ, կոտորածով և արեամբ ելից դամնայն երկիրն. և զբազում քաղաքս և զամուր բերդս ի հիմանց քարայրապալս արար երեք հարիւր մինչև ի սահմանս: Բաղդադ քաղաքին: Բայց զՈւռհա ոչ արար աւեր յաղազս կրօնաւորացն, որ բնակեալ էին ի լերինն և յամենայն սահմանս նորա՝ երկոտասան հազար. և զայր հաստնէր ի վերայ Ամթայ քաղաքին բազում սրտմտութեամբ: Իսկ տէրն Ամթայ քաղաքին կին էր, որ էր քոյր Համտնոյ ամիրային Տանկաց: Սւ յառաջ ժամանակաց թագաւորն խառնակեալ էր ընդ նմա մեղօք և վասն այնորիկ չարար հնարս առնելոյ զքաղաքն Ամթ: Սւ ելեալ կնոջն ի վերայ պարսպի քաղաքին, ասէ ցթագաւորն. «Ի վերայ կնոջ դաս ի պատերազմ և չհամարեա զայս քեզ նախատինք»: Սւ ասէր թագաւորն. «Նրդում ունիմ առ իս քակել պարիսպ քաղաքիդ, և ազատեսցին մարդիկդ»: Ասէր տիկինն քաղաքին. «Ե՛լ քակես զկոնդարայն՝ որ կայ ի վերայ Տղլաթ գետոյ, և այնու կատարեսցես զերդումն քո»: Սւ արար թագաւորն այնպէս. և առեալ բազում գանձս ոսկոյ և արծաթոյ, և թողեալ զԱմթ վասն կնոջն իւրոյ և վասն զի Չմշկիկն էր ի գաւառէն Խոզնայ, ի տեղոյն, որ այժմ կոչի Չմշկածակ և կինն ի նմին սահմանացն էր. զի յայնմ ժամանակին տանկունքն էին տիրեալ բազում տեղեաց: Սւ ահա թագաւորն յունաց խաղայր գնայր ընդ աշխարհն տանկաց արեանհեղութեամբ մինչև ի սահմանս Բաղդադ քաղաքին. և չրջան առեալ զնեքքին կողմն աշխարհին՝ գնայր յերուսաղէմ քաղաքն. և գրեաց թագաւորն Չմշկիկ թուղթ առ Աշոտ թագաւորն Հայոց»:

Այս վերջին խօսքերը Մատթէոսի վերաբերում են Չմշկիկի երկրորդ արշաւանքին, 975 թուականին:

Ասորի Նահայի պատմածն այս առաջին արշաւանքի մասին քիչ տարբեր է. նրա ասելով յոյն բանակը Մուշից իջնելով հասնում է Ասորիք, յարձակում է Ամիթ քաղաքի վրայ, որ Մլեհի պարտութիւնից ետքը կրկին անցել էր սարակինոսներին: Ամիթը բաց է անում իւր դռները կայսեր առաջ և ահագին տուգանք է վճարում: Նախ քան այս քաղաքի առումը յոյները գրաւել էին Նփրկերտը, որից մեծ աւեր էին հանել: Սղեսիոյ մասին Լեոն Սարկաւազն ասում է, որ դրա բնակիչները երկիւղից փախել էին, ուստի յոյները մտան գրեթէ ամայի քաղաքը: Այստեղ կայսրը խաղաղութեան դաշը կռեց Աբու թալիբ Լամբի հետ. Չմշկիկն այսու տիրեց հիւսիսային Միջագետքին, որ Բաղդադից բաժանւում էր անապատով. կայսեր վերջին նպատակէտն էր Բաղդադը, իսլամի այդ փառաւոր, մայրաքաղաքը, որ հիմնուելու օրից չէր կողոպտուել: Բայց աւանդ, այդ նպատակին հասնելու արգելք եղաւ կայսեր ոչ երկիւղը, ոչ մահմէդականութեան ոյժն, այլ անապատն և ջրի պակասութիւնը, կայսրը այդ միտքը թողեց միւս տարուան և հաւանօրէն զօրքը սահմանադրին տեղաւորելուց յետոյ՝ ինքը զնաց մայրաքաղաք, որ տօնէ իւր ասիական յաղթութիւնները. կայսեր յաղթական մուտքը Կ. Պօլիս շատ փառաւոր էր. առաջինից տանում էին ահագին քանակութեամբ ոսկի և արծաթ, ինչպէս տարեգիրն ասում է, կայսեր առջևից տանում էին երեք միլիոն ոսկի և արծաթէ դրամներ: Չմշկիկի այս երկրորդ յաղթանակն էր, չը նայելով որ հազիւ էր սկսել թաղաւորել:

ԳԼ. ԺԱ.

ՉՄՇԿԻԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔԸ ՍԱՐԱԿԻՆՈՍՆԵՐԻ ԴԵՄ
ԵՒ ՄԱՀԸ

Յովհան Չմշկիկը սրբազան Պալատը մուտք գործելուն պէս մի մեծ դժուարութեան հանդիպեցաւ, իւր իսկ ընտրած պատրիարք Բարսեղը մեղադրուում էր իբրեւ դաւաճան: Կայսրը նրան պատասխանատուութեան հրաւիրեց, իսկ պատրիարքը մերժեց նրա առաջ արդարանալու, յայտնելով որ իրեն դատել

կարող է միմիայն տրեզերական ժողովը, զայրացած կայսրը, որին երևի օժանդակում էին և խստաբարոյ պատրիարքից դժգոհ կղերն ու աւագանին, դահավէժ արաւ նրան և նշանակեց մի նոյնպիսի խստաբարոյ և ամենքից յարգուած անապատական, Անտոն Ստուգիացուն Կ. Պօլսի պատրիարք: Պատմագրի ասելով նոր պատրիարքը խորին ծերութեան մէջ էր, ինչպէս Յովհաննէս Ենթադրում էր, դա իւր ծերութեան պատճառաւ կը դժուարանար դէմ դնել մարմնաւոր իշխանութեան ճնշման, սակայն, ինչպէս պատմութեան ընթացքը ցոյց է տալիս շատ էր սխալուում հայ կայսրը, այդ ծերունին Պողքիտէտ պատրիարքից պակաս յամառութեամբ չը պաշտպանեց եկեղեցու շահերը:

Յաջորդ տարուան (975) գարնան բացուելուն պէս, կայսրը կտնդնեց իւր բանակի գլուխը մահմեդականութեան դէմ արշաւելու: Սոսկալի ներքին խռովութիւնները քայքայել էին Բաղդադի ամիրապետութիւնը, որին Յովհաննէս վերջին հարուածն էր կամենում տալ: Բայց յոյն բանակն առ այժմ մի աւելի փութով գործ ունէր վճարելու, Նգիպտոսում հաստատուած ֆաթմանց նոր հարստութիւնը սպառնում էր Ասորիքին, նախ պէտք էր գրաւել Փիւնիկէն և Ասորիքն, իսկ ապա դառնալ մահմերձ և խռովութիւնների մէջ կորած Բաղդադի դէմ:

Ֆաթմեան Մուիզ ամիրապետի զօրավարներն արդէն գրաւել էին Պաղեստինը, Փիւնիկէն և Դամասկոսը, որ սակայն կրկին դուրս էր եկել նրանց ձեռքից շնորհիւ Բաղդադի խալիֆային հաւատարիմ մի թուրք զօրագլխի քաջութեան: 975 թուականի սկզբին Մուիզ ամիրապետի զօրավար Նասր ներքինին արշաւել էր Փիւնիկէ և յոյներից խել էր Բէյրութը: Կայսրը պէտք է շտապէր մինչև թշնամու Անտիոքին հասնելը:

Չմշկիկը գարնան առաջին օրերին սկսեց իւր արշաւանքը, նրա նպատակն էր Նրուսահէմը, կայսրութեան նախկին սահմանագլուխը մինչև Նգիպտոս: Ինչպէս ֆրանսիացի պատմաբանն ասում է, մինչև վերջին ժամանակներս Չմշկիկի այս արշաւանքի մասին շատ քիչ բան էր յայտնի, բարեբախտաբար մի վերին աստիճանի հետաքրքրական և հաստատուն վաւերական յայտնուեցաւ, որի ստուգութեան մասին ոչ մի կասկած չէ կարող լինել: Այդ վաւերականն է Չմշկիկ կայսեր նամակը, հայոց Աշոտ Թագաւորին ուղղած, որ մեզ տալիս է Մատթէոս Ուռհայեցին:

Այս մի անյուսալի բարեբախտութիւն է, քանի որ բոլոր հայկական հարստութեանց դիւաններէց, թէ Բագրատունեաց և թէ Ռուրիկեանց, կորել են դարերից ի վեր այն մեծ ջրհեղեղներէ մէջ, ուր ընկղմել է այդ դժբախտ ազգը,» գրում է Շիւմբերթէն այդ թղթի մասին:

«Այս կայսերական նամակը, որ լի է չը հրատարակած բազմաթիւ հետաքրքրական անցքերով, մի պաշտօնական ճշմարիտ և մանրամասն յայտարարութիւն է 975 թուի արշաւանքի և կայսեր և իւր հաւատարիմ զօրքի մահմեդականաց դէմ տարած յաղթութիւններէ մասին, մի յայտարարութիւն որ ստորագրել է ինքը կայսրը: Նրկար ժամանակ դա անծանօթ էր և ծածկուած մինչև մեր դարը Նդիսիոյ հին եպիսկոպոսի հայերէն գրուածքի մէջ, առաջին անգամ թարգմանուած 1811 թ. Ս. Մարտեւի ձեռքով, բայց չը նայելով դրան դարձեալ գլխովին անծանօթ էր մնացել այս անգնահատելի արժէք ունեցող բնագիրը մինչև որ 1858 թ. երկրորդ անգամ թարգմանուեց է. Դիւլորիէի ձեռքով, որ այս նուագ, հանեց դրան այն խաւարից, ուր մնացել էր: Շնորհիւ այս թղթի մենք կարող ենք ստուգել. արաբ և յոյն տարեգրների այնքան անկատար պատմութիւնները: Ինչպէս կը տեսնենք, այս տարեգրները շատ քիչ բան են աւելացնում կայսեր պատմածների վրայ և յաճախ սխալուում են: Բնականաբար, տարեգրողներն երբ հակասում են սրան, պէտք է իրաւունք տանք կայսեր, որ ինքն էր ղեկավարում տմբողջ արշաւանքին և որ անշուշտ ճշմարտութիւնն էր հաղորդում իւր դաշնակցին: Անշուշտ Մատթէոս Ուռհայեցին, որ գրում էր ԺԲ. դարու առաջին քառորդին, կարող էր ընդօրինակել այդ նամակը բնագրից, որ այդ ժամանակ կարող էր պահուած լինել Բագրատունեաց արքունի դիւանում Անի քաղաքում:

Այս խօսքերին կից ծանօթութեան մէջ յառաջ է բերուած և Դիւլորիէի վկայութիւնը Չմշկիկի թղթի հայերէն բնագրի մասին, որի արդի վիճակն իսկ ցոյց է տալիս, որ դա թարգմանուած էր յունարէնից, որովհետև յատուկ անուններն իսկ յունական հայցական հոլովով են տառադարձուած հայերէն (Վրիդուն=Բէյրութ. Ովուլուն=Օբուլ):

Չմշկիկի նամակի սկիզբը վերաբերում է իւր առաջին տարուան արշաւանքին, որ արդէն պատմել ենք, երկրորդ մասը

975 թուի արշաւանքի նկարագիրն է, որ կայսրը գրել է անշուշտ
Վ. Պօլիս դառնալուց առաջ: Ահա այդ Հշանաւոր վաւերա-
թուղթը:

«Աշոտ շահնշահ Հայոց մեծաց, և իմ հոգեկան զաւակ *),
լուր և իմացիր թէ՛ որչափ ինչ սքանչելիս արար Աստուած առ
մեզ և զարմանալի յաղթութիւնս, որ և իմանալն անկարելի է
զԱստուծոյ քաղցրութիւնն և զահաւոր մարդասիրութիւնն զոր
արար տէր ընդ ժառանգութիւնս իւր: Ի յայսմ տարւոյս՝ ի ձեռն
թագաւորութեան մերում կամեցաք և քո փառաւորութեանդ
ծանուցանել, ու Վշոտ Բաղրատունի և զաւակ իմ. իմացու-
ցանեմ քեզ, որ և դու, որպէս և քրիստոնեայդ ես և հաւա-
տարիմ սիրելի թագաւորութեանս և մերում, ուրախանաս
և փառաւորես զահաւոր մեծութիւնն Քրիստոսի Աստուծոյ
մերոյ և գիտացես թէ՛ որչափ օգնեսցէ Աստուած քրիս-
տոնէից յամենայն ժամանակի. քանզի յետ հարկաւորու առնելոյ
թագաւորութեանս մերոյ զամենայն արևելս Պալսից. և կամ
թէ՛ որպէս զնշխարս սրբոյ հայրապետին Յակոբայ Մծբնայ ի քա-
ղաքէն տաճկաց և առաք ի տաճկաց զհարկն մեր, և զգերու-
թիւնն հանաք ի նոցանէն և ելեալ զնացաք: Եւ վասն ամբար-
տաւանութեան և հպարտութեան Ամիր-ըլ-մուամնոյ **) իշխանին
Ափրիկեցոց, զորս Մախրը Արապիկ ***), կոչեն, որ և բազում
զօրօք եկեալ ի վերայ մեր և առ ժամ մի ի վտանգի արկին
զօրսն մեր, և ապա յաղթեցաք նոցա մեծաւ զօրութեամբ և
օգնականութեամբն Աստուծոյ, և ամօթալիցս դարձան որպէս
զայլ թշնամիսն: Եւ յայնժամ առաք զներքին կողմն աշխարհին
նոցա և ի սուր սուսերի մաշեցաք զգաւառս բազումս և փու-
թապէս դարձաք ի դուրս և արարաք ձմերոց և զամենայն հե-
ծելազօրսն մեր հոռոգեցաք. ***») յապրիլի ամսեանն ի մուսոն

*) Հահնշահ տիտղոս Բաղդադի խալիֆն էր շնորհեւ Աշոտին, իսկ
հոգեւոր զաւակն էին կոչուում բոլոր հայ թագաւորները Բիւզանդիոյ կայսր-
ներէն:

**) Ամիր էլ մուսնին այստեղ վերաբերում է Ֆաթման խալիֆ Մուկիզնի:

***) Մախր-Արապիկ արաբերէն ամաղբերի խօսքիցն է, որ կը նշանակէ
«արեւմտեանք» մասնաւորապէս Մարդի բնակիչ:

****) Հին հրատարակութեան «հաւաքեցաք»-ից այս նորը յարմար է
թուում մեզ, որով կայսրը տալիս է և իւր արշաւանքի ընդհատելու պատճա-
ռը, այն է՝ հեծելազօրքի պաշար գտնելը: Այստեղ էլ վերջանում է առաջին
արշաւանքի նկարագիրը և սկսուում է երկրորդին:

դիմնալ խաղացաք ի յաշխարհն Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց և քննայող առնէաք զպիղծ Ափրիկեիցն, որք եկեալ էին ի դաւառն Շամայ: Եւ եկեալ ամենայն դօրօք մերովք դիմնալ խաղալով գնացաք ի յԱնտիքայ *) և անցաք ընդ ամենայն դաւառսն մերոյ թագաւորութեանս և ի հնազանդութիւն արարաք մեծաւ հարկատրութեամբ և անհամար գերութեամբ և հառաք մինչև ի Հէմս քաղաք. և ելեալ ընդունեցին զմեզ բարւոք՝ որք մեր հարկատուքն էին դաւառականքն և հասանէաք մինչև ի Վատտովէքն (Բակքէք), որ անուանեալ կոչի Իլուպօլիս (Helio-polis), որ է Արեգ քաղաք, երեւիլ և անաւոր պարսպեալ մեծ յոյժ և հարուստ: Եւ ելին պատերազմաւ ընդ առաջ մեր, և բազմութիւնք զօրաց մերոց հալածական արարին զնոսս և ի բերան սրոյ կոտորեցին: Եւ յետ սակաւ աւուրց պաշարեցաք զԱրեգ քաղաք, և բազում գերութիւնս, մանկունս և աղջկունս առին զօրքն մեր և զգանձս ոսկւոյ և արծաթոյ անասունս բազումս առին. և ահա անտի ելեալ յառաջացաք ի մեծ քաղաքին Դամասկոս, կամեցաք և զայն պաշարել: Իսկ քաղաքապետն աւեր էր և այր իմաստուն, առաքեաց առ թագաւորութիւնս մեր և բազում ընծայիւք աղաչեաց զմեզ չանկանիլ ի գերութիւն և ոչ զնալ ի ծառայութիւն, որպէս զՎատտովէքայ զընակիչսն և ոչ զգաւառսն աւերել որպէս զնոցայն: Եւ բերին բազում տուրս պատուականս և յովով ձիս և ջորիս երեւիլ և գեղեցիկ սարք յոսկւոյ և արծաթոյ և հարկս յԱրաբացեաց ոսկւոյն քառասուն հազար դահեկան, առին ի մէջ զօրավարս **) և տուին մեզ զիւրս, զի յաւիտեան ծառայք կայցեն թագաւորութեանս մերում՝ ազգ զհետ ազգի և ցեղ զհետ ցեղի: Եւ կարգեցաք անդ զօրավար զայրոմն, որ կոչէր Թուրք, այր փառա-

*) Այս ընթերցուածն ևս աւելի ճիշտ է թուում քան թէ հին հրատարակութեան ի յԱնտիք, որովհետեւ այդ քաղաքը յոյներէ ձեռքին էր և իբրեւ սահմանի ամենից նշանաւոր բերդը, զօրքն ևս այնտեղ ձմեռած կը լինէր: Այս ընթերցուածին հաստատութիւն է տալիս և Խօսքի շարունակութիւնը:

**) Ֆրանսիացի թարգմանիչը յեղաշօյլել է այս Խօսքերիս իմաստը. furent distribués par nous à nos soldats: Իբրեւ թէ 40,000 ոսկին կայսրը բաժանել է իւր զօրականներին, մինչ խնդիրն այստեղ վերաբերում է բերդապահ գնդին և բնագրի «զՕՐԱՎԱՐՍ» բառը պիտի փոխել «զօրականս» ինչպէս այդ ունին միւս ձեռագիրները:

ւոր Բաղդատեցի, որ եկն առ մեզ ի ծառայութիւն հինգ հարիւր ձիաւորով և հաւատաց ի Քրիստոս. որ և յառաջն ծառայեալ էր Թադաւորութեանս մերում: Եւ Դամասկացիքն արարին դաշինս երգման, զի տացեն անխափան զհարկն, և ասացին զով Թադաւորութեանս մերում, և ընդ մեր թշնամիանմարանչել. և յաղագս այսորիկ անպաշարելի թողաք զնոսա: Եւ անտի յարուցեալ զնացաք ի Տիբերական ծովն, ուր Տէր մեր Յիսուս Քրիստոս հարիւր յիսուն և երեք ձկամբն զսքանչելիանարար. կամեցաք և զայն քաղաքն պաշարել, իսկ նոքա եկին ի հնազանդութիւն մերոյ Թադաւորութեանս և բերին մեզ ընծայս բազումս, որպէս Դամասկացիքն, և հարկս երեսուն հազար դահեկանս առանց այլ տրոց և խնդրեցին զօրաւարս ի մէնջ և զիր ծառայութեան տուեալ մեզ հաստատուն որպէս զԴամասկացիքն՝ հնազանդ լինել մեզ յաւիտեան և տալ անխափան զհարկն մեր: Յայնժամ թողաք զնոսա ազատ ի գերութենէ և ոչ աւերեցաք զքաղաքն և ոչ զգաւառսն՝ և ոչ արարաք զնոսա յաւարս, վասն զի հայրենի տուն էր սրբոց առաքելոյն: Նա աւանիկ և զՆազարէթ, ուր զաւետիսն իսկ ի հրեշտակէն լուաւ Աստուածածին սուրբ կոյսն Մարիամ:

«Նոյնպէս զնացաք և ի Թափօրական լեռն և ելաք յայն տեղւոյն, ուր այլակերպեցաւ Քրիստոս Աստուած մեր: Եւ մինչ դեռ յայն տեղւոյն կայաք, եկին առ մեզ ի Ռամէէ և յՆիուսաղեմէ ազաչել զԹադաւորութիւնս մեր՝ ողորմութիւն գտանել ի մէնջ. խնդրեցին զօրաւար և եղեն հարկատուք և ուխտեցին լինել մեզ ի ծառայութիւն, զոր արարաք իսկ: Կամեցաք և զսուրբ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ազատել ի գերութենէ տաճկաց:

«Կարգեցաք զօրաւարս յամենայն թէմս, որք հնազանդեցան և եղեն հարկատուք Թադաւորութեանս մերում, որ է Պենիագա, որ կոչի Դեկապոլիս *), և ի Դենեսարէթ և յԱրկեա, որ կոչի Պտողմիա և զրով յանձին կալան ամ յամէ անխափան տալ զհարկն և լինել ընդ ծառայութեամբ մեր: Գնացաք մինչ և ի Կեսարիա, որ է յեզր մեծի ծովուն Ովկիանոսի, հնազանդեցան և եկին ընդ մերով իշխանութեամբ: Եւ եթէ ոչ

*) Դիւօրիէն ուղղագրում է Իրաւամբ բնագիրը Պենիագան փոխելով Բէթան, որ կոչուում էր Սկիւթոպոլիս, Դեկապոլիս դաւառի մայրաքաղաքը:

էին փախուցեալ ծովեզերաց բերդերն, որք էին բնակեալ պիղծ Ափրիկեցիքն զարհուրեալք ի մէնջ, օգնականութեամբն Աստուծոյ ի սուրբ քաղաքն Նրուսաղէմ էաք գնացեալ և ի սուրբ տեղիսն Աստուծոյ էաք յաղօթս կացեալ: Եւ իբրեւ լուաք եթէ փախեան ծովեզերաց բնակիչքն, յայնժամ զվերին կողմն աշխարհին հնազանդեցուցաք և ընդ Հռոմոց իշխանութեամբ արարաք և կարգեցաք անդ զօրավար և ի մեր կոյս արարաք և զոչ հնազանդեալսն պատերազմաւ պաշարեցաք և առեալ գնացաք ընդ ծովեզերին պողոտայն, որ դէմ յանդիմոն երթայր ի Ղոխտեոն քաղաքն յերեկին և յանուանին պարսպեալ յոյժ (որ այժմ ասի Պէրութ *), պատերազմեալ և սաստիկ կռուով առեալ գնա և հաղար Ափրիկեցի ձերբակալս արարաք, նոյնպէս և զՆուսերի զԱմիր-ըլ-մուամնոյ և զայլ լաւագոյն իշխանսն. և յայն քաղաքն զօրավար եղաք և անտի կամեցաք ի Սիդովն անցանել: Իսկ յորժամ լուան Սիդովնացիք, առաքեցին առ մեզ զծերսն քաղաքաց իւրեանց. եկին աղաչեցին զթագաւորութիւնն մեր և խնդրեցին, զի հարկատուք լինիցին մեզ մեծաւ ահիւ և կալ մնալ մեզ ի ծառայութիւն. զոր լուաք իսկ աղաչանաց նոցա և կատարեցաք զկամս նոցա և առաք ի նոցանէ պարկն և տուաք նոցա զօրավարս:

«Եւ անտի յարուցեալ զնացաք ի Բիւղոն հին և ամուր բերդն և զայն ևս պատերազմեալ առաք և զբնակիչս նորա ի գերութիւն մատնեցաք. և մեծաւ աւարաւ և գերութեամբ անցաք ընդ ամենայն ծովեզերաց քաղաքանին ընդ դժուար և ընդ նեղ ճանապարհին ընդ որ այլք զօրք հեծելոց ոչ երբէք էր անցեալ նեղ և նուրբ և չար ճանապարհ. և անդ գտանէաք չէն ու վայելուչ քաղաքանի և ամուր բերդեր, յորում կային տաճիկ պահապանք, զամենայն պաշարեցաք և քորայտատակ կործանեցաք և զբնակիչսն ի գերութիւն վարեցաք:

«Եւ յառաջ քան զհասանելն մեր ի Տրապոնիս հեծելագօրս առաքեցաք զթիմացիսն և զՏաշխամատացիս (?) ի կապանն, որ կոչի Քարիւբես, վասն զի լուեալ էր մեր, եթէ պիղծ Ափրիկեցիքն անդ նստէին ի կապանին, և հրամայեցաք քմինս դնել և դարանս մահու գործեցաք նոցա. և որպէս պատուի-

*) Այս բացատրութիւնը անշուշտ Ուսկոյեցունն է և պէտք է հանել բնագրից:

ընցաքն՝ նոյնպէս և արարին. և երկու հազարք յայտնի ևղեալ ի նոցանէ ի վերայ զօրաց մերոց՝ զօրս բազումս ի նոցանէ սպանին և յուլս ի նոցանէ արարին կալանականս, և ածին առաջի մերոյ թագաւորութեանս. նոյնպէս և ուր հանդիպէին՝ փախստականս առնէին զնոսա: Սև իսպառ ջնջեցաք զամենայն աշխարհն Տրապօսոյ, զայգիսն և զձիթենիսն և զբուրաստանսն նոցա առհասարակ կոտորեցաք և յաւեր դարձուցաք և արմատախիլ արարաք զամենայն գաւառսն. և Ափրիկեցիքն, որ էին անդ համարձակեցան և ելին ի պատերազմ ընդդէմ մեր: Յայն ժամ յարձակեցաք ի վերայ նոցա և կոտորեցաք զամենեւեան առ հասարակ: և ապա առաք զմեծ քաղաքն զԾՈՒԼՆ, որ Գարաւոնն (*կոչէին* *), զՎաղանեացն և զՍիւսն, և զինքն իսկ հռչակաւոր Զուրզաւ (Bourzô), և ոչ մնաց մինչև ցլթամէ և ցկեսաբիւ՝ ոչ ծով և ոչ ցամաք, որք ոչ հնազանդեցան թագաւորութեանս մերում, զօրութեամբն Անեղին Աստուծոյ, զի մինչև ցրաբելոն հնազանդ արարաք թագաւորութեանս մերում և արարաք ծառայս զնոսա մեզ: Վասն զի ամիսս եւթն չրջեցաւ թագաւորութիւնս մեր յայնմ աշխարհին հանդերձ զօրօք բազմօք. և սպառեցաք զքաղաքս և զգաւառս և ոչ իշխեաց եւլանել Ամիր-ըլ-մուամնի ի Բաբելոնէ ընդդէմ մեր և կամ հեծեալս արձակել յիւր զօրացն յօգնականութիւն: Սև եթէ չէր լեալ խստագոյն խորշակ և անջրդի ճանապարհ ի յայն տեղիսն, որ մերձ է ի Բաբելոն, որպէս և քո փոռաւորութիւնդ իսկ զիտենալ ունի, թագաւորութիւնս մեր մինչև ի Բաբելոն երթեալ էր, որ և զինքն իսկ յերկիրն եզիպտացոց հալածեցաք և իսպառ յաղթահարեալ շնորհօքն Աստուծոյ, որ թագաւորեցոյցն զիս:

Ազատեցան այժմ ամենայն Փիւնիկէ և Պաղեստին և Ասորիք ի ծառայութենէ տաճկաց և հաւանեցան ընդ Հոռոմոց իշխանութեամբ: Այլ և Լիբանանու մեծ լեառն հնազանդեցաւ ընդ մերով իշխանութեամբ, և զամենայն տաճկունքն որ անդ կային, հաւաքին բազմութեամբ, գերութեամբ առաք և բաշխեցաք հեծելոց մերոց, և զԱսորեստան (այսինքն Ասորիս) քաղցրապէս և մարդասիրապէս հովուեցաք. հողիք իբրև 20,000 հանաք, և ի Գարաւօն բնակեցուցաք:

*) Դիւլբրինն իրաւամբ ուղղում է այս անունն Զուէլ կամ Գարաւա:

Ահա գիտացես, զի այսպիսի յաղթութիւնս ետ Աստուած քրիստոնէից, որ ոչ եղև երբէք: Եւ գտաք յայնմ քաղաքին ի Գաբաւօնն զսուրբ հողաթափն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որով և շրջեցաւ իսկ ի վերայ աշխարհիս. նոյնպէս և զպատկերն Փրկչին մերոյ, զորս Հրէայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղվաղակի էլ արիւն և ջուր զլսոց տիգին. գտաք և յայնմ քաղաքին զպատուական հերսն զլսո Կարապետին և Մկրտչին Յովհաննու և առեալ տանեմք ի սահմանութիւն աստուածապահ քաղաքին մերոյ: Եւ արդ ի սեպտեմբեր ամսոյն հաճութեամբն Աստուծոյ զմեր Աստուածակեցոյց զօրքն յԱնտիօք հանաք և վասն այնորիկ քո փառաւորութիւնդ գիտացուցաք՝ վասն զի ի ձեռն մեր հրամանացս զարմանաս և դու ինքն իսկ փառաւորես զԱստուծոյ մեծ մարդասիրութիւնն և գիտացես թէ որչափ բարի գործեցան այժմիկ և կամ քանի յաւելան և լայն և ընդարձակ եղև իշխանութիւն սրբոյ խաչին Քրիստոսի և մինչև ցայս տեղիք անունն Աստուծոյ զովի և փառաւորի. և ճոխանայ թագաւորութիւնս մեր անուամբ մեծութեամբ և զօրութիւն Աստուծոյ բարեբանեալ զովի ի բերանոյ մերմէ. զորս ընդ ձեռամբ մերով հնազանդեցոյց Աստուած, ընդ որում հանապազօր օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի:

Ուռհայեցին կայսեր այս նշանաւոր նամակին կցում է և երկու այլ նամակ, մին ուղղուած Տարօնի հայ իշխան Լևոնին. որ խոստացել էր Այծից բերդն յանձնելու, և չէր յանձնել, 40,000 Օբոլ էր ստացել արքունի բանակի համար զբաստ հացներու և չէր կատարել: Կայսրը պատուիրում է նրան դրամը յետ դարձնել և սպասել իւր ծառայութեանց վարձին: Անշուշտ ծաղր է կամ սպառնալիք այս վարձի խոստումը:

Ահա այդ հետաքրքրական նամակը.

«Եւ յանափոռութեն (?) Պռոտօսպաթրին Դերջանոյ, Լևոնի և Տարոնոյ զօրավարին ողջոյն և իտէր խնդալ: «Արդ գրեցաք որ զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չես տուեալ. և այժմ գրեցաք առ զօրավարդ մեր որ ոչ բերդն առնու և ոչ զցորեանն զոր պոմանեցեր, զի այժմ չեղև առ մեզ պէտք. բայց զքառասուն հազար սօլօնն, զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր որ, առաքէ առ թագաւորութիւն մեր. և զվաստակոցդ քոց և զարմտեացդ դտանես զփոխարէնն ըստ սերմա-

նեապն զամենայն բարի մի ըստ միովէ՞ս:

Ներորդ նամակն ուղղած է հայ Ղևոնդ վարդապետին, որ Աշոտի դեսպանն էր եղել կայսեր մօտ, սրան հրաւիրում է կայսրը, որ շտապէ Կ. Պօլիս հասնելու, որպէս զի ներկայ լինի իւր վերադարձին և իւր հետ տօնի Քրիստոսի հողաթափներէ և Մկրտչի հերաց տօնը: Ղևոնդը կատարում է կայսեր հրամանն ու այնտեղ մեծ հռչակ հանելով դառնում է հայրենիք:

Սամուէլ Անեցի հայ ժամանակագիրը յիշում է նոյնպէս Չմշկիկի այս նամակն առանց բնագիրը յառաջ բերելու: Սամուէլի ասելով՝ կայսրը այս նամակի հետ փաթեթամ ընծաներ ուղարկեց Աշոտին երկու հարիւր գերիններ և հազար ասորական ձիանց հետ միասին:

Այս զարմանալի վաւերագրերը յառաջ բերելուց յետոյ, Նիւմբերգէն մի առ մի վերստուգում է կայսերական նամակի մէջ յիշուած անցքերն և լրացնում յոյն և արաբ պատմագիրներին խօսքերից: Առանձնապէս ուշադրութեան արժանի է Դամասկոսի առումն իւր թատերական հանդիսաւորութեամբ: Հետաքրքրական այն է, որ կայսեր նամակի մէջ յիշուած բոլոր այն դէպքերը, որ կայսրն իւր նամակում յիշատակում է, Չմշկիկի նամակի վաւերականութիւնը հաստատում է անհերքելի կերպով:

Յովհան Չմշկիկն այսպէս յաղթական գործեր կատարելով և յունական բանակն այն երկրներն առաջնորդելով՝ ուր քանի քանի դարեր ոչ մի հռովմէական բանակ ոտք չէր կոխել, վերադառնում էր իւր մայրաքաղաքը աւարով և նորանոր սուրբ նշխարներով: Ոչ ոք չէր մտածում գալիք դժբախտութեան մասին: Օգոստոս ամսից սկսած մի զարմանալի գիսաւոր աստղ ամէնքին վրդովել էր իբրև թշուառութեան նախագուշակ, սակայն բիւզանդացի քննող գիտնականներ այդ նշանն ևս յօգուտ կայսեր էին բացատրել, ուստի և աւելի անսպասելի էր կայսեր անակնուկի մահը:

Իւր փառաւոր բանակի գլուխն անցած կայսրը մտաւ նախ Կիլիկիա, որ Նիկեփոր կայսեր հետ միասին ինքն էր խել սարակինոսներից, երկրի բարեշինութիւն և պտղաբերութիւնը հրճուանք ազդեց կայսեր: Անցնելով Տօրոսի միւս կողմը կայսրը կրկին հիացաւ բարեբեր և հարուստ ագարակները տեսնելով՝ բայց յանհունս զայրացաւ, երբ իմացաւ, որ այդ բոլոր գեղեցիկ ագարակները Վասիլ ներքինուն են պատկանում: Այս ա-

գահ նախարարը մեծամեծ յափշտակութիւններով այնքան կալուածներէ էր տիրել, որ ամէնքի նախանձը շարժում էր, ուստի երբ Զմշկիկն իմացաւ նրա այս աստիճանի հարստութիւնը, սկսաւ բարձրաձայն դժգոհութիւն յայտնել Վերթէ ամբողջ գօրքը և կայսրները իրենց կեանքը վտանգի էին ենթարկում պատերազմներում, որ իրենց գրաւած երկրներին որ և է ողորմելի ներքինի տիրէ: Այս լուրերը հասան Վասիլ ականջին, ուստի և որովհետեւ Յովհանն յանկարծակի հիւանդացաւ և մեռաւ, շատերը Վասիլն են մեղադրում, որ իբրեւ թէ նա է թուեաւորել տուել կայսեր:

Երբ կայսրը մօտեցել էր արդէն Սրբազան քաղաքին, փոխեց նա իւր ուղին և հիւր գնաց Ռոմանոս Լոկապէնի թոռան, Ռոմանոս պատրիկի կալուածքը, Ոլիմպոսի հարաւակողմը: Կայսեր պատուին խաթսիներէ միւս օրը հիւանդացաւ Յովհանն, նա թուլացաւ, մի սաստիկ ջերմ սկսաւ այրել ներսը, վէրքեր բուսան մարմնի վրայ, ոչ մի դեղ չօգնեց նրան, ուստի և շտապեց հրաման տալ, որ շուտով աւարտեն իւր դամբարանը, որ շինել էր տալիս Կ. Պոլսում իւր սիրած խալկէի մատրանը:

Այսու ամենայնիւ նա տօնեց իւր երրորդ յաղթանակը, որի ժամանակ հոգեւորք էր գրեթէ: Պալատ հասնելուց յետոյ այլ ևս ոտքի չը կանգնեց Կիւ ժանը, կանչել տուաւ Անդրիոսի Նիկիողայոս եպիսկոպոսին և երկարօրէն խոստովանուեցաւ. իր անձնական հարստութիւնը սկսաւ բաժանել աղքատներին և բողոքողներին, որոնց վրայ յատուկ խնամք ունէր: Վերջապէս վախճանը ազատեց նրան ցաւերից 967 թուի յունուարի 10-ին վեց տարի մի ամիս թագաւորելուց յետոյ, իւր կեանքի յիսուն և մէկ տարեկան հասակումը: Այսպէս մեռաւ այրական հասակում ամենափայլունը, ամենաքաջն և թերեւ իսկ ամենալաւը բիւզանդական կայսրներից:

Զը նայելով ժամանակակիցների մեղադրութեանց և ժամանակագիրների վկայութեան Շլիմբերգէն չէ հաւատում, որ Վասիլ ներքինին թունաւորել տուած լինի նրան, իրաւամբ չնշտում է նա այն երևոյթը, որ յայտնի անձանց յանկարծակի մահը միշտ ժողովրդական կասկածների առիթ են տալիս: Միանգամայն և յիշում է, որ բժշկութեան մէջ անյայտ է որ և է թոյն, որից մարդս մեռնէ «գանդաղաբար, բայց հաստատապէս», ինքը հաւանական է համարում, որ Յովհանն զոհ է գնա-

ցել որ և վարակիչ ախտի, նոյն իսկ տիւֆաի:

Յովհանն չը թողեց սրգիք, գոնէ պատմագիրները չեն յիշում, որ նա որդիք ունեցած լինի, ինչպէս և յիշատակութիւն չկայ, թէ ինչ եղաւ Թէոդորա թագուհին:

Չմշկիկի թաղման հանգիսի նկարագիրը չունենք մենք, միայն գիտենք, որ նրա դամբարանը չքեղ էր, որից սակայն ոչինչ նշան չէ մնացել, երևի 1204 թ. խաչակիրներն այդ ևս աւերած կը լինեն ուրիշ շատ հոյակապ յուշարձանների հետ միասին:

Յովհան երկրաչափը մի դամբանական է գրել Կիւ Ժանի մասին, որի մէջ սակայն դարձեալ փայլում է այդ բանաստեղծի տառապանքները դէպի Չմշկիկն, որին նա չէ ներում Նիկեփորին սպանելը:

Մտաթէոս Ուռհայեցին, որ ժամանակով այնքան մերձ է Յովհանին, տարօրինակ կերպով է պատմում նրա վախճանը, իբրև թէ նա Աստուծոյ ապագայ դատաստանի երկիւղից ընկճուած շարունակ կոծում և ողբում էր: Ապաշխարութեամբ իւր մեղքը քաւելու համար նա հրաժարւում է թագից, բերել է տալիս Հայաստանից Վասիլ և Կոստանդին կայսրներին և թագաւորեցնում, իսկ ինքը քաշուում է վանք: Յիրաւի Յովհանը շատ բարեպաշտ և կրօնասէր էր, բայց յամենայն դէպս հեռու վանական դառնալուց:

Այսպիսի ողորմելի վախճան ունեցաւ այս բախտախնդիր հայն, որի մասին Ֆրանսիացի պատմաբանն ասում է, որ բիւզանդական կայսրներից «ամենից քաջը եւ գուցէ ամենից լաւն էր»:

Բիւզանդիայում գործող հայերից այս ամենամեծ անձի կեանքը նկարագրելուց յետոյ կը սպասենք մի այլ աւթի և այն բաղմամբիւ մանր դիւցազն հայերի մասին խօսելու, որոնք յայտնի են դարձել Բիւզանդիայում:

Ն. Բարսեղեան

